

ՀԱՄՇԵՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

ՎԵՐԱՊՐԱԾ ԳՈՀԱՐ ՍԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

[1916 թ.]
[Թիֆլիս]

Տիկին Գոհար Ա. Սարեան, 34 տարեկան, բնիկ տրապիզոնցի, ռուսահայտակ, գրագետ, երեք երեխայ ունի՝ Նունուֆար, Շուշանիկ և Ֆարիստ և մի 16 տարեկան սպասուհի: Ապրում են Թիֆլիս, 8-րդ քաղաքամաս, Սվիզոնյ նրք. N 10: Անուսինը՝ Արամ Սարեանը և տագրերը՝ Արշակ և Արմենակ Սարեանները սպանուած են Տրապիզոնում:

Թուրք զորաշարժին՝ հայ զինուորների ձեռքը գնեք չտուհին, այլ գործածեցին իբր բանուոր, իսկ կարողություն ունեցողները բեղել վճարեցին: Տրապիզոնի հայերը արտակարգ հաւատարմութեամբ ծառայեցին, անհաշիւ նուիրատուութիւններ արին, բայց և այնպէս կառավարութիւնը բռնազրաւեց հայերի և յոյների խանութային կայքերն ամբողջովին: Մինչև 1915 թ. յունիսի 1-ը Տրապիզոնը խաղաղ դրութեան մէջ էր, բնակիչներից շատերը ամառանոց քաշուած էին, թէև աւելի շատ ռմբակոծութեան երկիւղից:

Մայիսին՝ Վանի դէպքերի հետևանքով խիստ խուզարկութիւն կատարեցին, մաւանդ ռուսահայտակների և դաշնակցականների մաս՝ երևան հանելով միմիայն մի ատրճանակ և մէկ քանի որսի հրացան:

Յունիս 11-ին հաւաքեցին բոլոր ռուսահայտակներին և 15 յեղափոխականներին, ասելով, թէ ձեզի Սամսոնի ձամբով Ավագ պիտի քսուանք: Սրանց դիրն մի մեծ նաւակի մէջ, բոլորի ձեռքերը չուաններով կապեցին և դաշունահար անելով՝ ծովը թափեցին: Սրանց մէջ էին իմ ամուսինը և տագրերս: Ռուսահայտակ Վարդան անուն մէկը զխից և ձեռքերից վիրաւորուած, ծովից լողալով դուրս եկաւ և արնաթաթախ դիմեց իտալական հիւպատոսարան, որին էր յանձնուած ռուսահայտակների պաշտպանութիւնը, բայց հիւպատոսը նրան վրնդեց: Յետոյ Վարդանը միամտաբար դիմեց կուսակալին՝ բողոքելու, բայց նրան տարան թուրքերը հիւանդանոց և այնտեղ թուաւորեցին: Այս և ուրիշ մանրամասնութիւններ են իմանայ կուսակալի 15 տարեկան որդուց, որ պարծենալով պատմում էր:

Ես և իմ մէկ բարեկամուհիս, որի ամուսինն էլ իմ ամուսնու հետ նաւակի մէջ էր, գնացինք իտալական հիւպատոսին՝ բացատրութիւն ուզելու: Մեզ շատ գէշ ընդունեց և նոյն իսկ վնդեց հիւպատոսարանից: Նա եղաւ շատ անպարտաճանաչ և չկարողացաւ կամ չուզեց պաշտպանել ռուսահայտակներին ու նրանց ընտանիքները:

Յունիս 13-ի Շաբաթ օրը յայտարարութիւններ փակցուցին, հինգ օր պայմանաժամ էր տրուած պատրաստուելու և Միջագետք մեկնելու, ոչ մէկ կարասի կամ հարստութիւն հետը չպիտի վերցնել և ոչ ծախել յոյնի կամ թուրքի: Ամէն ոք ինք իր ունեցածը ինք իր ձեռքով պիտի յանձնէ կառավարութեան: Յետոյ կարող են մնալ ծեր, հիւանդ, որբկայրի դարձած և յղի կի-

Բարձրաբժեք հրատարակություն

Հայաստանի ազգային արխիվը 2012թ. իրականացրեց մի աշխատատար ու շատ շնորհակալ գործ, հրատարակեց «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու» եռահատորը: Առաջին հատորն ընդգրկում է Վանի, երկրորդը՝ Բիթլիսի, երրորդը՝ Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգների և Պարսկաստանի հայերից արված գրառումները: Երախտագիտությամբ նշենք այն մարդկանց անունները, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել այս բարձրաբժեք հրատարակությունը. զխալոր խմբագիր, հեղինակ և կազմող՝ պատմ. գիտ. դոկտոր Անատոնի Վիրաբյան, հեղինակ և կազմող՝ պատմ. գիտ. թեկնածու Գոհար Ավագյան, տեքստերի սրբագրումը՝ պատմ. գիտ. թեկնածու Գևորգ Յազգյանի, համակարգչային շարվածքը՝ Թագուհի Բաղդասարյանի, քարտեզների հեղինակ՝ Գեղամ Բաղայան, քարտեզների համակարգչային ձևավորող՝ Մարտին Մարտիրոսյան: Հրատարակությունը ֆինանսավորել է «Վան» հասարակական կազմակերպությունը: Ցավոք, հարյուրավոր վկայությունների շարքում միայն մեկն է վերաբերում Տրապիզոնի նահանգին. դա Գոհար Սարյանից կատարված գրառումն է, որն ընդգրկված է 3-րդ հատորում (էջ 368-373): Նույնը, բայց արդի ուղղագրությամբ տպագրվել է նաև Հայաստանի ազգային արխիվի 2005թ. հրատարակած «Վշտապատում. Հայոց մեծ եղեռնը ակնամատենների աչքերով» ժողովածուում (էջ 363-369): Հայաստանի ազգային արխիվը շարունակելու է հրատարակել ցեղասպանությունից փրկվածներից գրառված վկայությունները, ուստի հույս ունենք, որ առաջիկայում Տրապիզոնի նահանգին վերաբերող ավելի շատ փաստաթղթեր կտպագրվեն:

| | | |
|------------------|----------------|----------------------|
| ՀԱՅՈՒՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ | ՎԵՐԱՊՐԱԾ ԳՈՀԱՐ | ՍԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ |
| 1 | 2 | 3 |

ները, և այս մնացողները քաղաքապետութեան բժիշկից տեղեկագիր պիտի ունենան, աղերսագիր տալով և երկու դուրուշնոց փուլն՝ ալ վրան փակցնելով, յետոյ ոստիկանապետից մի թուրք են ստանալու և նրա ոյժով կը մնան:

Նոյնպէս կառավարութեան պաշտօնեաները իրենց ընտանիքներով վար դրին՝ Սամսոնի վրայով Անկարա և այնտեղից էլ իբր թէ Պոլիս ուղարկելու: Ով ուզեր՝ ձի, կառք կարող էր բռնել: Բայց ոչինչ չկար մէջտեղ: Տրապիզոնից ոտքով մինչև Միջագետք ճանապարհորդել պարզապէս բնաջնջուիլ համարեցին ամէնքը և սկսեց խուճապ:

Փողոցները ո՛չ յոյն և ո՛չ թուրք ընտանիքներ չէին տեսնուեր, բոլորը գիւղեր քաշուեցան՝ այս զուլումը չտեսնելու: Մենք՝ կիներս, հաւաքուեցանք, երեխաներով միասին կուսակալին դիմեցինք: Կոպտօրէն մեզ վնդեցին: Դիմեցինք Գերմանիոյ հիւպատոսին, մէկ ժամ հեռու քաղա-

քից, ամառանոցում: Շատ վատ ընդունեց նա և ասաց, թող չանկէ՛ք, արեւ էք՝ պիտի՛ քաշէք:

- Ի՞նչ արինք,- պատասխանեցինք:
- Հասա Վանը,- ասաց նա:
- Այստեղ Վան չէ, մենք հանգիստ ժողովուրդ ենք, ոչինչ չգիտենք: Եւ ուրիշ շատ աղաչեցինք, բայց անգթօրէն մեզ վնդեց: Դիմեցինք Աւստրիոյ հիւպատոսին: Միտով ընդունեց, լացաւ և ասաց. «Կուգէի օգտակար լինել, բայց իմ ձեռքս բան չկայ»:

Քաղաք դարձանք և դիմեցինք ամերիկեան կոնսուլին: Նա մեզ յուսադրեց, թէ պիտի աշխատի, բայց ոչինչ չկարողացաւ անել, միայն իր պաշտօնեաները՝ ընտանիքներով, 15 հոգի կարողացաւ պահել:

Դիմեցինք Իթիհատի պարագլուխ Նայիլ բէլին, խորամանկ ժպիտով մեզ հաւաստիացրեց, թէ ճանապարհին ամէն ապահովութիւն և խնամք պիտի ունենաք: Սակայն Տրապիզոնի ջարդը կարգադրողներն էին արդէն այս Նայիլ բէլը, կուսակա-

լը, քաղաքապետութեան բժշկապետը, ոստիկանապետ Մեհմէդ Ալին, որ տրապիզոնցի չեն և տեղացիներից Մուսայ էֆէնդի և շաքարագործ Սալիհ և ուրիշ մի քանիներ, 12 հոգի են ամէնը:

Չորրորդ օրը սկսեցին ժողուել այլ մարդիկ, տարին կէս ժամ հեռաւորութեամբ հայոց վանքը: Հինգշաբթի սկսեցին թաղթաղ ընտանիքները ժողուել, յետոյ մի նոր հրաման հանեցին, թէ ամէն ոք իր տղան կրնայ թողնել ծանօթ յոյնի, ամերիկացի միսիոների կամ յունաց դեսպոթին՝ մօտ: Աղջիկները, 15 տարեկանից վար, մանչերը, 10 տարեկանից ցած, շատ ծնողների յանձնուեցին միսիոներներին և յոյն միտրապոլիտին:

Քաղաքից մեկնած առաջին խմբին միացրին վանք հաւաքած այր մարդկանց: Սրանց յանձնեցին մի հարիւրապետի և քսան-երեսուն ժանտարմայի: Դեռ հայոց խմբերը չէլած՝ ավազակները մեկնած էին լինում:

Թուրքերից (տեղացի) մի մաս բնաւ չմասնակցեց արիւնտ գործին: Իսկ ուղղակի մեռնողներն էին հարիւրապետը, ժանտարմները, թուրք չէթաները և բոլոր ռճրագործ բանտարկեալները, որոնց այն օրերը բանտից արձակեցին այր նպատակով, ինչպէս նաև փախստական գիրջիներ, նաւավարներ: Սրանց մէջ ամէնակատաղին [էին] նաւահանգիստի «քեփիա»-ն՝ և իր եղբայր Ապան անունով երիտասարդը և բանտարկեալ Նեջատը:

Առաջին և երկրորդ խումբը, այր ու կին խառն, մինչև Գիւմուշխանէի տակ՝ Բալդաբան կոչուած տեղը հասցրին: Այնտեղ այրերը ջոկեցին՝ կոտորելու, իսկ կանանց մինչև Երզնկա քշեցին: Մի կին ճանապարհից վերադարձաւ և պատմում էր ճանապարհի նեղութիւնների և այս բաժանման մասին: Ճանապարհը ոստիկաններով և ժանտարմներով լեցուն էր և հետզհետէ ամէն օր խմբերով ճանապարհ էին դնում տեղահանուածներին:

Քաղաքից մէկ ժամ հեռաւորութիւնից լսում էի սրանց ողբն ու աղաղակը և ականջներս փակում: Շատ կիներ և աղջիկներ արդէն թոյն առին, երբ ոստիկանները տներն էին մտնում՝ տեղահանելու: Խաչիկ աղա Ապանեան ինքն իրան պատուհանից ցած նետեց և մեռաւ, Կարապետ Մնացականեան ինքնասպան եղաւ դանակով: Մի հայի կինը՝ ծագումով բուլգար, ածելիով կտրեց իր պարանոցը: Հնչակեան Գուրգէն Սարգսեանի հայրը կրակ ձգեց իր տունը և այրեց, բայց ոստիկանների կրունկների տակ մեռաւ: Իսկ ինք՝ Գուրգէնը պահուած էր մի տան մէջ և 15 օր վերջ թուրք կնկայ ծածկոյթով դուրս եկաւ, բայց փոխների ձեռքը ընկաւ: Ամերիկեան հիւպատոսին քավազը՝ ահից ինքնասպան եղաւ: Շէրանցի դաշնակցական Սեդրակը մէկ ամիս պահուեց իրենց տան առաստաղի մէջ, յետոյ նկատուեց և պաշարուեց ոստիկաններով, մէկ ժամ կռուելուց վերջ սպանուեց՝ վիրաւորելով մէկ փոլիսի:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Մեկ ժամ 13 րոպե Համշենի մասին՝ վավերագրության լեզվով ու գիտական հենքով: Պատմել - ներկայացնելու այս ձևի ընտրությունը թուրքագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Սահակյանին է, պատմությունը՝ «Համշենը անցյալի ու ներկայի խաչմերուկներում» երկու մասանոց հեղինակային ֆիլմը: 2010-2012 թթ. համշենցիների բնակավայրերում փոքրակազմ գիտահետազոտական խմբի դաշտային հետազոտությունների ընթացքում է ծագել ֆիլմի ստեղծման գաղափարը, ու նշված աշխատանքներին զուգահեռ նկարահանումներ են կատարվել Ռիզեի նահանգի Արդաշեն, Չամլիհեմշին, Հեմշին (Համշեն), Չայելի գավառներում և Արդվինի նահանգի Խոփա գավառում, ինչպես նաև Էրզրումի նահանգում: Կարճ ձևակերպելու պարագայում կարելի է ասել՝ ֆիլմը գիտահանրամատչելի նյութ է՝ XVIII դարում Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացված, «թուրքացված» Համշենի հայության սերունդների ներկա վիճակի և իսլամացմամբ նրանց հանդեպ գործադրված ցեղասպանության ավերիչ հետևանքների մասին: «Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկներում» ֆիլմի կարևորությունը գուցե և չբացատրվի մարտի 22-ին «Մոսկվա» կինոթատրոնի լեցուն կինոդահլիճում անցած պրեմիերայով, բայց վստահաբար ասացույցն է ֆիլմի նյութով հանրության հետաքրքրվածության: Պրեմիերայից հետո «Կինոաշխարհը» հանդիպեց ֆիլմի հեղինակին:

- Խնդրեմ նախ անդրադարձեք «Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկներում» պատմության նկարահանման աշխատանքներին:

- Սկսեմ նրանից, որ համշենցիների միջավայրում իրականացրած դաշտային աշխատանքների ընթացքում հավաքած նյութերի մի մասն արդեն հրապարակել են գիտական հոդվածներում և «Համշենի մանրատեղանունները» գրքում: Հենց այս ուսումնասիրություններն էլ ֆիլմի հընթացս գրվող սցենարի հիմքն են կազմում: Ի դեպ՝ սցենարի հեղինակն ու ռեժիսորն ինքս եմ, իսկ սցենարի խմբագիրը՝ «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, իմ լավ բարեկամ Սերգեյ Վարդանյանը, որն իր ողջ կյանքը նվիրել է Համշենի ուսումնասիրությանը: Ֆիլմում տեղ գտած բարբառային տեքստերի թարգմանությունը նույնպես Սերգեյ Վարդանյանինն է: Ասեմ, որ նա նույնպես մասնակցել է դաշտային աշխատանքներին: Դրանցից մեկին մասնակցած իմ բարեկամ օպերատոր Ռադիկ Շառոյանի նկարահանումներն էլ տեղ են գտել ֆիլմում, իսկ մոնտաժն Արմեն Ինզիլիզյանինն է: Ի դեպ, ի սկզբանե ֆիլմ նկարահանելու մտադրություն չկար, սակայն տեսնելով, թե ինչպիսի բացառիկ կադրեր են հանդիպում մեզ համշենցիների կենցաղից, մշակույթից, երգ ու պարից, որոշեցի Համշենն ու համշենցիներին հանրությանը վավերագրությամբ ներկայացնել:

- Եվ ի՞նչ ֆինանսավորմամբ կարողացաք նկարահանումները հաջողել:

- Ֆիլմի համար կոնկրետ ֆինանսավորում չի եղել: Դաշտային հետազոտությունների իրականացման համար ինձ աջակցել է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, անցյալ տարի նաև՝ ՀՀ Գիտության կոմիտեն, իսկ մնացածը եղել է մեր էնտուզիազմը, նվիրումը գործին: Հետագայում մոնտաժային աշխատանքների և անգլերեն ենթագրերի թարգմանության համար անհրաժեշտ գումարը ձեռք բերվեց անձնական կապերով. գործի կարևորությունը գիտակցելով՝ մոսկվաբնակ և լուսանջելեսաբնակ բա-

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԱՎԵՐԻՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ՌԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՆՏՐՏՈՒՔԸ ՖԻԼՄՈՒՄ



Լուսինե ՍԱՀԱԿՅԱՆ
2012 թ. Արմին Վեգների անվան մրցանակակիր

Լուսինե Սահակյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու:

Համշենը անցյալի ու ներկայի խաչմերուկներում

Ֆիլմի և սցենարի հեղինակ՝ Լուսինե Սահակյան

Սցենարի խմբագիր և բարբառային տեքստերի թարգմանիչ՝ Սերգեյ Վարդանյան

րեկաններս՝ Սամվել Կարախանյանն ու Հայկազ և Ալիս Հովհաննիսյանները ֆինանսապես աջակցեցին: Կարող եմ ասել, որ արդյունքը սրտով արված աշխատանք է, որը ոչ մի կապ չունի որևէ գրանտային ֆինանսավորման հետ և, ի վերջո, չի վերածվելու բիզնես ծրագրի:

- Ձեր ձևակերպմամբ ֆիլմը ինչի՞ մասին է:

- «Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկներում» ֆիլմի նյութը գլխավորապես XVIII դարում Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացված, «թուրքացված» Համշենի հայության սերունդների ներկա վիճակն է: Այսօր

ակնատես-վավերագրողը դարձաք:

- Ֆիլմը երկու մասից է բաղկացած, առաջինը՝ «Արդվինի նահանգ», երկրորդը՝ «Ռիզեի նահանգ»: Արդվինի նահանգի համշենցիները, որոնք իսլամացումից հետո՝ երկու դար առաջ, դուրս գալով բուն Համշենից, եկել և հաստատվել են Արդվինի Խոփա և Բորչկա գավառներում, դարերի ընթացքում կորցրել են հայկական ինքնության շատ կարևոր շերտեր, սակայն, զարմանալիորեն, թուրքական այդ օվկիանոսում կարողացել են պահպանել հայերենի Համշենի բարբառի իրենց տեղական խոսվածքը: Նաև այս համ-

ցեղերից սերած, սակայն կան այնպիսիք, որոնք իրենց թուրք չեն համարում, այլ՝ համշենցի: Ռիզեի համշենցիների շրջանում թուրքացումն առավել խոր արմատներ է գցել, և նրանք մոռացել են իրենց մայրենին՝ հայերենն ու խոսում են թուրքերեն: Ոմանք ընդունում են, որ հայկական ծագում ունեն, սակայն անմիջապես հավելում են, որ արդեն թուրքացել են: Բնականաբար, ֆիլմը շատ ավելի մանրամասն է տեղեկացնում ասվածին և ոչ միայն. ներկայացնում է նաև համշենցիների բանասիրության, խոսվածքի, հավատալիքների նմուշներ, խոհանոցը, յուրահատուկ երգն ու պարը՝ Խոփայի համշենցիների և համշենցի հայտնի երգիչների կատարմամբ: Ի դեպ, նրանց երգն ու պարն ուղեկցվում են սրնգի, երբեմն՝ պարկապուլի նվագով, օգտագործում են նաև գուռնա ու դիոլ: Այս և շատ այլ, այդ թվում և պատմական մանրամասների, իհարկե, կարող եք տեղեկանալ՝ ֆիլմը դիտելով:



նրանք հիմնականում ապրում են ներկայիս Թուրքիայի Ռիզեի և Արդվինի, Էրզրումի, Սաքարիայի նահանգներում, ինչպես նաև Ստամբուլում և այլ քաղաքներում: Ֆիլմում ներկայացված են Համշենի հայկական երբեմնի հզոր իշխանությունը և նույնքան հզոր մշակույթը անցյալում ամբողջապես մարմնավորած, այսօր դրանց երբեմնի լինելությունը փաստող կառույցների ավերակներ ու որոշ սովորույթներում պահպանված հայկականության փշրանքներ: Նաև մեկնաբանվում է իսլամացման օսմանյան քաղաքականությունը, որը ոչ այլ ինչ էր, քեթ ոչ ցեղասպանության մի տարատեսակ:

գամանքով է պայմանավորված, որ նրանց մեջ կան այնպիսիները, որ ընդունում են իրենց հայկական ծագումը: Բայց միայն այսքանը: Հետաքրքրական է, որ Խոփայում և առհասարակ համշենցիների շրջանում տարածված է մարքսիստական գաղափարախոսությունը, և դրա կրողների կյանքից դուրս է մղվել իսլամը: Թեև Ռիզեի նահանգում նույնպես հանդիպեցինք մարքսիստական գաղափարախոսությունը կրողների, սակայն 1950-ականներից Թուրքիայում տարածվող իսլամական կառույցները լրջորեն ազդել են Ռիզեի համշենցիների վրա, ինչի հետևանքով շատացել են մզկիթները և համշենցիների մեջ էլ մոլեռանդ մահմեդականներ են հայտնվել: Կան համշենցիներ, որոնք իրենց համարում են թուրքական

- Արդեն ասացիք, որ ֆիլմը բիզնեսի չի վերածվելու, այսինքն՝ այն չի թողարկվելու DVD ֆորմատով, ուրեմն հետաքրքրված անձը որտե՞ղ և ի՞նչ կերպ դիտելու հնարավորություն կունենա:

- Ասեմ, որ «Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկներում» ֆիլմը, բացի պրեմիերայով Երևանում ցուցադրվելուց, առաջին անգամ ներկայացվել է «Արփա» միջազգային կինոփառատոնում և արժանացել Արմին Վեգների անվան «Մարդասիրական» մրցանակին: Ի դեպ, այս մրցանակն առաջին անգամ է տրվում Հայաստանի ներկայացուցչի: Արդեն կան մի քանի հայկական հեռուստաընկերություններով ֆիլմի ցուցադրման առաջարկներ, որոնց ընդունումը հետաձգել են, քանի որ ֆիլմը մի քանի կինոփառատոններում ներկայացնելու մտադրություն ունեն: Մինչև այդ հարկ եմ համարում այն նաև թուրքերեն թարգմանել՝ համշենցիների միջավայրում տարածելու համար:

- Համացանցում այն հասանելի կլինի՞:

- Դա էլ որոշ ժամանակ է պահանջում:

- Կարելի՞ է արդյոք ֆիլմի նյութը համապարփակ ներկայացված համարել, և նկարահանումների ընթացքում զգացվել է կինոյի այրոֆեսիոնալների պակաս:





ՎԵՐԱՊՐԱԾ ԳՈՒՀԱՐ ՍԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Ձեռքանոս գիւղին մէջ, եկեղեցու թաղը, երեք հայ գիւղացիներ պահուած էին: Երբ նկատուեցին՝ սկսուեց կռիւ: Տունը վառեցին նրանց վրայ: Մէկ ժամտարմ սպանուեց:

Շատ հարուստ կիներ մէկ-երկու օրուան ճանապարհից վերադարձնում էին, ասելով, թէ եթէ ձեր հարստութեան տեղը իմացնէք՝ կ'ազատուէք: Գալիս էին յոգնած, ոտները ուռած, ամէն ինչ յայտնում և ապա կրկին հանում էին ճանապարհ, բայց այս անգամ քաղաքից կէս ժամ հեռու՝ Դեգիրմէն դէրէ գետի ափին սպանում էին և ջուրը ձգում: Գետաբերանի կողմից կտրուած էին թէ՛ ժամտարմները և թէ՛ աւազակները, բռնաբարում էին ութ տարեկանից վեր եղող բոլոր կանանց, իսկ դիմադրողներին տեղն ու տեղը սպանում էին:

Իսկ վերջին խմբերի այր մարդկանց արդէն քաղաքի մօտն էին սպանում, նույնպէս բոլոր գիւղացի այր թէ կին, մէկ օրուայ ճանապարհի չկարողացան անցնել: Գետին երկայնքը հարկուներով, հագարներով, բոլորին մերկացրած, սուի-նով, սրերով սպանում էին և գետը ձգում: Այս բոլորը պատմում էին յոյն զօրքերը, թուրքերի հետ ամուսնացած հայ աղջիկները և կիները և նոյն իսկ իրենք՝ թուրքերը:

Իսկ ես արդէն յունիսի 15-ին երեխաներովս միասին գնացի Սուրբսու՝ կուսակալին ամառանոցը և շատ լացի, խնդրեցի: Կուսակալին կինը գթաց ինձ, բարեխոսեց և թոյլատրեց ինձ հիւանդ ձեռնալ և մնալ հիւանդանոցում: Ես իմ երեք երեխաներով և աղախնիս հետ սրանից յետոյ մնացիք հիւանդանոցում: Երեք օր վերջ թուրք հիւանդներին տեղափոխեցին և տեղը բերին հայ ծերերին, հիւանդներին, յիւներին, երեխաներին, ինչպէս և Մետրապոլիտի և ամերիկացիների մօտ եղած բոլոր երեխաներին: Հայերի մեծ տները, օթելները, դպրոցները և Հայոց Առաջնորդարանը բացին, երեխաները այնտեղը լցրին և անուանեցին դպրոց: Տուր տարեկանից վեր մեծ տղաներին ջուրեցից և ջրեցից Զևհալիկ, սրանցից մի քանի հոգու թուրքերը վերցրեցին, իսկ միս բոլորին սուիներով սպաննել են:

Բժշկապետը ամէն օր ըննում էր բոլորին, մէկ մասին ուղարկում դէպի ծովը, միսին՝ դէպի ճանապարհը՝ կոտորելու: Ամէն օր կողովներով բերում էին ձգած և անտէր երեխաներին, որդնած և կեղտոտ և տեղահանուածների տեղը դնում: Թուրքերը գալիս էին, որին հաւանում, վերցնում, տանում էին: Հինգ օր վերջ սուրբիմա՞ բերին և սկսեցին նախ համոզելով, ապա բռնի խմցնել հիւանդներին: Շատեր իսկոյն մեռան: Ութ օր վերջ հիւան-

դանոցները մաքրուեցին, բոլորին դիակները գոց կառքերով ծովն էին թափում: Հիւանդանոցի միւղի Մեհմէդ Ալի բէյը հիւանդանոց ապաստանողները բովանդակ հարստութիւնը գրաւեց:

Միս կողմից սկսեցին նաւակներով հայ պաշտօնեաներին ընտանիքներով ծովը տանել, սպաննել և ջուրը թափել: Սրանց մէջն էին հեռագրատան պաշտօնեայ ամուսնուս եղբայրը, իր աղջիկը և կինը:

Հայ զօրքերին 15 օր պահեցին, արդէն շատեր ճանապարհի վրայ էին աշխատում: Յետոյ նրանց ձեռքով մեծ փոսեր տուին պեղելու և սուիհար անելով, թահեցին այնտեղ: Իսկ Բալդաբան ջուրած այր մարդկին ամբողջովին կոտորուեցին քառասուն չէթաների ձեռքով: Սրանց կանգնեցրել են շարքով և, ինչպէս պատմում էր մի ազատուած հայ զինուոր, մէկ գնդակով 25 հոգի են ծակել:

Տեղահանուածներին հասցրել են մինչև Քեմախ: Այնտեղ մի քանի կին և աղջիկներ մնում են թուրքերի մօտ, յետոյ ջրում են Ակնի ուղղութեամբ, Եփրատի ամէնախոր կիրճից և մեծամասնութիւնը գետը թափում: Եթէ խումբը բարի ժամտարմայի հետ էր, յաջողում էր ծանծաղ տեղից անց կենալ: Սրանք պատմեց այդ տեղից ազատուած մի կին, որ Ակն մնացր էր, յետոյ Կիրատսն անցած և այնտեղից շատ ճարպիկութեամբ Տրապիզոն, մեզ մօտ: Նրա ասելով, Եփրատի դիմաց մի ժայռ կայ, որի վրայ փորագրել են Երանի՛ այս ժայռը տեսնողին: Քեմախից այն կողմը իբր թէ այնքան էլ վտանգ չկայ: Այն կողմը մեռնում են միայն անօթութիւնից, յոգնութիւնից, հիւանդութիւնից, առանց հագուստի և դրամի: Գարալիկները հանդիպած քաղաքներում թուրքերի տներ են մտնում, իսկ մնացեալները շարունակում են ճանապարհը մինչև Միջագետք: Հինգ ամիս վերջ նամակ ստացայ տագոս կնոջից և գաւակներից, որ Ակն էին գտնուած: Նամակ առի նոյնպէս 15 տարեկան եղբորիցս, որ գրում էր, թէ խարբերող անցանք:

Ես և իմ երեխաները, ինչպէս և Մախախեանները (մայր, քոյր, աղջիկ) և վեց ուրիշ աղջիկներ մնացին հիւանդանոցում՝ կուսակալի կնոջ պաշտպանութեան տակ և դուրս չէինք կարող գալ, որովհետև կոմիտէն (իթիհատ) մեզ կը բռնէր և կը սպաննէր: Յուլիսի մէջերը մեզ տարին մզկիթի վերածուած ֆրանսիական մատուռը, իմամը՝ (թուրք հոգևորական) եկաւ և մեր իսլամացման օձիւր կատարեց: Տասնհինգ հոգի էինք: Վեց աղջիկներին նիքի-ահ արին (պակեցին) մահմեդական երիտասարդների վրայ: Ինձ էլ միւղիւն էր առաջարկութիւն անում, բայց ես մինչև չորս ամիս մերժեցի, ասելով թէ ամուսինս ողջ է:

Հիւանդանոցի մէջ բժիշկ Ավնի բէյ, որ մի քիչ լաւ էր մեզ հետ, պատմեց մի գիւղացի աղջկայ մասին, որը սարսափելիորէն դիմադրած էր և 95 տեղից վիրաւոր՝ բռնուած բերին հիւանդանոց Պոլիս դրկելու և գիշերը անյայտացրին:

Բժշկապետի մօտ իբր խոհարար ծառայող Կալիկ անուն իսլամացած հայ կնոջը վեց ամիս վերջը ծովը նետեցին՝ լաւ լուացք չանելու համար:

Կուսակալի կինը ամառանոցից քաղաք եկաւ և ինձ տարաւ իր հետ Սովուք-սու, ուր հինգ հայ աղջիկներ էլ կային՝ Արմենուհի Քահրիմանեան, Իւղաբեր Ճգնաւորեան, Արուսեակ Գազանճեան, Միրանուշ Էթմէքճեան (որը թոքախտից մեռաւ) և Արսէն Մինասեանի չորս տարեկան աղջիկը:

Միւղի Մեհմէդ Ալին ինձ պահանջեց Պլատանա ուղարկելու, բայց իսկապէս մեռցնելու, որովհետև նրա առաջարկութիւնը մերժեցի: Ամէն բան հասկացրի կուսակալի կնոջը և նա բարի եղաւ կառավարական պաշտօնեաներից Էդիեմ էֆէնդու հետ ինձ նիքի-ահ անել տալու: Այս մարդը շատ բարի էր և ինձ ու երեխաներիս պահեց պատուով: Նա մի օր պատմեց, թէ 6 կին ու աղջիկ և 2 այր, բոլորը զինուած, անօթութեան չդիմանալով, յանձնուեցին, թուրքերը գիշերը տարան և ծովը ձգեցին: Այս օրերում 4 այր գիւղացիներ էլ եկան յանձնուեցին և նոյնիսկ թլպատուեցին, բայց նորից սպանուեցին:

Էդիեմ էֆէնդի չորս ամիս մեզ պահելուց յետոյ օգնեց ինձ մի յոյն գիւղ ապաստանելու երեխաներով միասին, երբ մահմեդականացած կին-աղջիկներին կը տեղահանէին դէպի Սամսուն՝ ռուսերի մօտենալու երկիւղից: Երկու ամիս էլ մնացինք այդ Կանլիկա գիւղում: Այդտեղ հաւաքուեցին և սարերի մէջ ողջ մնացած մի քանի հայեր: Յոյն գիւղապետը մտադիր էր մտանել, բայց Էդիեմ էֆ. իմ թելադրութեամբ սպառնաց նրան և մնացինք մինչև ռուսները գրաւեցին Տրապիզոնը:

Տասն օր մնացինք Տրապիզոն և այնտեղից Բաբունով Թիֆլիս անցանք, ուր մնում են երեխայիս հիւանդութեան պատճառով և ապրում են կար անելով, ինչ որ սովորել էի դպրոցական հասակում, բայց չէի գործադրած բնաւ փարթամ օրերին:

ՀԱՍ, ֆ. 227, ց. 1, գ. 453, թթ. 9-12 շրջ., բնագիր, ծեռագիր:

- 1 Փուլ - որոշմանից:
- 2 Դեպոտ - հոյն եպիսկոպոսի տիրոջ:
- 3 Միտրոպոլիտ - ուղղափառ (հունարական) եկեղեցիների թեմակալ արքեպիսկոպոս:
- 4 Գյուրջի (թուրք.) - վրացի:
- 5 Քըւալա (թուրք.) - կառավարիչ:
- 6 Քավազ, դավազ (թուրք.) - դեպատանտան կամ հյուպատոսարանի ցրիչ, թոթատար, հասկացվել է նաև թիկնապահ իմաստով:
- 7 Օթել - հյուրանոց, իջևանատուն:
- 8 Սուրբիմա - քրոյային սնդիկ:
- 9 Իմամ - մահմեդական կրոնի հոգևորական, կրոնավոր:

ՀԱՅ ԶԱՐՏԱՐԱՊԵՏԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅՏՆԻ Է ՄԶԿԻԹՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Ազգությամբ հայ ճարտարապետը Թուրքիայում զբաղվում է մզկիթների և այլ մուսուլմանական, ինչպէս նաև քրիստոնէական կառույցների շինարարությամբ և վերականգնմամբ:

Գևորգ Օզքարապյոզը մզկիթների հայտնի ճարտարապետ է: Նրա գլխավորությամբ Թուրքիայի տարբեր հատվածներում մզկիթներ և «ջեմիներ» (ալկի և բեքթաշիական ուղղության հետևորդների հավաքատեղիներ) են կառուցվել, տեղեկացնում է «Աքշամ» պարբերականը:

Գևորգը ծնվել է Մալաթիայում, սակայն 6 տարեկանում տեղափոխվել է Ստամբուլ, որտեղ էլ հետագայում ճարտարապետի կրթություն է ստացել:



Երկար տարիներ է, ինչ նա զբաղվում է մզկիթների շինարարությամբ:

Գևորգը նշում է, որ ինքը քրիստոնյա է, եկեղեցի է գնում, սակայն դա չի խանգարում իրեն մուսուլմանական կրոնական շինություններ կառուցել:

«Մեծ քաջություն է լինել ազգությամբ հայ և մզկիթներ նախագծել», -թերթի հետ զրույցի ժամանակ նշել է Գևորգը, ով հավելել է, որ հաճույքով է անում իր աշխատանքը և հարգում է բոլոր կրոնները:

Նրա կառուցած վերջին մզկիթներից է Բալըքեսիր քաղաքի Փլևնե մզկիթը:

Գևորգը չի սահմանափակվում միայն մզկիթների և ջեմիների կառուցմամբ: Հայ ճարտարապետի գլխավորությամբ է 2000 թվականին վերանորոգվել Պոլսի Հայոց պատրիարքարանը, 2010 թվականին՝ Ստամբուլի Գունգափու թաղամասի Սուրբ Ռոզվոց Ռոտունան հայկական եկեղեցին:

allTurkey.am

- Այն բավականին ամբողջական է, չնայած որ նկարահանված նյութն ամբողջովին չի ներառվել ֆիլմում: Բացառված է, որ ապագայում դրանք էլ ներկայացնեն ֆիլմի կամ այլ հանրամատչելի տեսքով: Դա հետագայի գործ է: Ինչ վերաբերում է կինոյի պրոֆեսիոնալների մասնակցության հարցին, ապա դրա կարիքը չի եղել, քանի որ ֆիլմը հեղինակային է: Փորձել են իմ հեղինակային խոսքն ասել: Բացի այդ, այսօր հեռախոսով նկարած ֆիլմն էլ ուշադրության ու մրցանակների է արժանանում և դասվում վավերագրական ֆիլմի ժանրին: Ասեմ նաև, որ կինոնկարահանման տեսանկյունից ոչ պրոֆեսիոնալ պահվածքը շատ ավելի անմիջականություն էր ստեղծում զրույցներում ու փոխադարձ վերաբերմունքում: Իսկ այսօրվա մեր նկարահանումների բուն նպատակն այդ գավառներում առկա հայկականության վերջին հետքերի՝ նրանց խոսակցական թուրքերենում առկա հայերեն բառերի ու տեղանունների գրառումն էր, սակայն մեծապես ուրախ եմ, որ հաջողվեց անել ավելին, այդ թվում և ինքնուրույն հետ կապված համաշնչիների ընկալումներն ու ժողովրդագրական պատկերը ներկայացնել:

«Որքանով հնարավոր է դատել մամուլից, թե՛ հայության կողմից, թե՛ Թուրքիայում համայնքներին առնչվող յուրաքանչյուր տեղեկատվություն արժանանում է ոչ միանշանակ արձագանքի:

- Հարկավոր է Համաշնչին և համաշնչիներին յուրաքանչյուր անդրադարձ կատարել մեծ պատասխանատվությամբ ու պրոֆեսիոնալիզմով: Ցավոք, ոչ մեկը, ոչ մյուսը հիմնականում նկատի չի առնվում, և բազմաթիվ անհիմն եզրահանգումներ են արվում: Մասնավորապես, տեղեկություններ են տարածվում այն մասին, թե համաշնչիները 3 միլիոն են կազմում: Բայց հիմք ընդունելով բացառապես իրենց իսկ համաշնչիների տեղեկությունները (եթե ոչ լիովին ճշգրիտ, ապա մեծապես հավաստի են)՝ ժողովրդագրական այլ պատկեր ենք տեսնում. բարբառախոս Խոփայի գավառի համաշնչիները, Թուրքիայի այլ քաղաքներում հաստատվածներով հանդերձ, մոտ 45 հազար են կազմում, իսկ բուն Ռիզեի գավառներում և Թուրքիայի մեծ քաղաքներում, ուր համաշնչիները մեկնում են արտագնա աշխատանքի ու նաև մշտական բնակության, հաշվվում են մոտավորապես 60 հազար: Սրանք այն համաշնչիներն են, որոնք ընդունում են գոնե իրենց համաշնչական ինքնությունը: Ասեմ նաև, որ Թուրքիայում արձագանքում են Համաշնչին և համաշնչիներին առնչվող յուրաքանչյուր հրապարակմանը:

**Հարցազրույց՝
ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
«Կինոաշխարհ» ամսաթերթ,
2013 թ., մարտ (հ.3)**

Սերգեյ Վարդանյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի
գիտաշխատող

ԱՅՇԵՆՈՒՐ ՔՈՒԿԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՐԳԱՑԱՆԿԸ

Վերջերս Ստամբուլից ստացա ինձ համար մի թանկ նվեր. ճանաչված երգչուհի Այշենուր Քուկարին ուղարկել էր 2012թ. թողարկված իր երաժշտական ալբոմը, որի եր-



կու սկավառակներում ընդգրկված 25 երգերից 3-ը հայերեն էին՝ Համշենի բարբառի խոփայի խոսվածքով: Այշենուրը ծնվել է Ռիզեի նահանգի Չայեի գավառի կրոնափոխ համալսարանի 3ըլդըզելի (նախկին Ռաշոտ) գյուղում, բայց հայերեն չգիտի, քանզի իրենց գյուղում հայերեն են խոսում ընդամենը մի քանի մեծահասակներ: Մանկության և պատանեկության տարիներին ապրել է Իզմիրում (Նիկոմեդիա): Բարձրագույն կրթությունը ստացել է Ստամբուլի նշանավոր Բողազիչի համալսարանում, որտեղ սովորել է թուրքերեն լեզվի և գրականության բաժնում: Այժմ դասավանդում է Ստամբուլի համալսարաններից մեկում: 1993-2000թթ. երգել է հանրաճանաչ «Քարդեշ թյուրքյուլեր» (եղբայրական երգեր) համույթում, որը թուրքիայի տարբեր ազգերի լեզուներով երգեր է հնչեցնում, 2001-2003թթ. երգել է «Ղալեփե նենա» (քույրերի ծայն) կանանց երգչախմբում, 2001-ից նա «Հելեսա» վոկալ-գործիքային համույթի մենեջրուհիներից է: «Հելեսան» սիրված է հատկապես Սև ծովի արևելյան ափերին ապրող ժողովուրդների մշակույթների ջատագովների շրջանում, նրա երկացանկում հաճախ են ընդգրկվում այդ տարածաշրջանի ազգագրական երգերը: Այշենուրի նոր խոսակցականներն էլ բացառություն չէին, 25 երգերից 8-9 թուրքերեն էին, մնացածը՝ հայերեն, վրացերեն, մեգրելերեն, լազերեն, չերքեզերեն, պոնտական հունարեն, որը շատ է տարբերվում Հունաստանի հունարենից: Հայերենի Համշենի բարբառի խոփայի խոսվածքով երգերը նշված են հեմշինջե, այսինքն՝ համշեներեն, թեև այդպիսի առանձին լեզու չկա:

Ալբոմը կոչվում է «Բահչեյե Հանըմե-լի», որը թարգմանվում է «Տիկնաթաթիկ պարտեզի համար»: Այդ բուրավետ ծաղկի թուրքերեն հանըմեյի անունը նշանակում է հանըմի, խանումի, տիկնոջ ձեռք, հայերենում էլ ունենք նույն ծաղկի անվան նույնիմաստ տարբերակը՝ տիկնաթաթիկ, կոչվում է նաև ցախակեռասենի, այծատերևի, դեղնաթաթիկ, ճանձիկ: Ալբոմը տարբեր լեզուներով ծաղիկների անուններով բաժանված է 7 մասերի, որոնցից 2-ը հայերեն են՝ մանուշակ և մեխակ: Վերոհիշյալ 7 լեզուներով երգերից ծաղկաբաղ անելով է Այշենուրը կազմել այս փունջը: Գաղափարը պարզ է, արևելյան սևծովյան տարածաշրջանի ազգերի մշակույթները միասին մի գեղեցիկ ծաղկեփունջ են, ծաղկազարդ պարտեզ:

Ի դեպ, իր այս դիրքորոշումն Այշենուրը հաստատել է նաև կինոաշխար-

հում: Նա մասնակցել է Սև ծովի ափերին ապրող տարբեր ազգերի մարդկանց կյանքը պատկերող մի քանի հայտնի ֆիլմերի երաժշտական աշխատանքներին, ինքն էլ երգել: Դրանք են՝ Եշիմ Ուստաօղլուի «Կյանքը շալակների վրա» («Իրենց շալակած կյանքը»)(2004), Էօզջան Ալիերի «Աշուն» (2008), Յուսուֆ Քուրչենլիի «Հարցրու քո սրտին» (2010) և Օրհան Թեքթեօղլուի «Իֆաքաթ» (2010) ֆիլմերը:


Այշենուր Քուկարի հետ ծանոթացել են 2008թ., երբ Ստամբուլի «Վոլա» համույթի հետ երգեց երևանյան համերգի ժամանակ: Մեր տանը լսելով Ղազախստանի Չիմբենդի մարզի Չիրկինո գյուղում բնակվող կրոնափոխ համալսարանից 1984 և 1987թթ. իմ ծայնագրած երգերը, շատ հավանեց և խնդրեց իրեն ուղարկեն դրանց լատինատառ տառադարձված տեքստերը: Դրանք իրենց նոտաներով հրատարակել էի դեռևս 1989թ. «Չայն համշենական» ժողովածուի 3-րդ հատորում: Ահա այդ խաղիկներից երկուսը՝ «Չէքտէս խաղիկույի յա» և «Նօրիարս էլլիմ», միացնելով Արդվինի նահանգի խոփայի և Բորչկայի գավառների համալսարանի 4 այլ խաղիկների հետ, երգում է Ղազախստանում գրառված մեղեդով:

Խաղիկների այս շարքը նա շատ բեմերից է հնչեցրել. արդեն երկու-երեք տարի է շրջանառվում է համացանցում, տեղադրվում տարբեր կայքերում: Այշենուրին ծայնակցող կանանց և աղջիկների 7 հոգանոց խմբից 6-ը Գայանե Գավրիլյուֆը, Թամար Նալջըն, մյուսները, պոլսահայեր են, «Սայաթ Նովա»

խոսակցականի մյուս հայերեն երգը՝ «Ղա՛, իմ Յուսուֆ օրթի», ողբերգ է, այն Այշենուրի կատարմամբ հնչում է միջազգային տարբեր կինոփառատոներում մի շարք մրցանակներ ստացած, ծնունդով խոփայի գավառից, համշենահայ ճանաչված ռեժիսոր Էօզջան Ալիերի «Աշուն»(2008) ֆիլմի վերջում, երբ մահանում է նախկին քաղբանտարկյալ երիտասարդը և նրա մայրը երգելով ողբում է: Այշենուրի կատարումը հնչում է որպես հոգու ճիչ, արծազանքվում լսողների սրտերում, անմռանալի հետք թողնում հիշողության մեջ: Երգի խոսքերը, ժողովրդականի օրինակով, գրել է Էօզջան Ալիերը: Ի դեպ, նման ողբերգերը, որ Համշենի բարբառում կոչվում են «բովուշ», այսօր էլ կենցաղավարում են համշենցիների շրջանում: «Բովուշ» բառացի նշանակում է գովել, քանզի հանգուցյալին գովում էին, և ողբում թե ինչ կորցրին: Այդ պատճառով բառն այժմ ունի միայն ողբալ իմաստը: Հենց այդ իմաստով էլ այն կիրառված է խոսակցականի հաջորդ հայերեն երգի վերնագրում՝ «Ջօրօխի բովուշ», այսինքն՝ ճորտի ողբ: Երգի մեղեդին ժողովրդական է, տեքստը հին պատմության հենքի վրա գրել է երիտասարդ արձակագիր Մահիր Էօզբանը: Ըստ որի նախկինում ճորտից վարար, շատ աղմկոտ գետ էր: Յայլա բարձրանալու համար մի կին ջորին բարձում է ու

սերունդ չեն ունենում: Երգին ու թարգմանությանը ծանոթացողները կնկատեն, որ նրանում անսպասելիորեն ակնարկվում է Հայոց ցեղասպանությունը, ինչը չկա ավանդության մեջ: Երգում որդեկորույս մայրը վշտի միջից անպատասխան հարցնում է. «Ճորտխին չեիրիքե՞ց, որդի, քանի օր արյուն հոսեց, որդի, չկշտացա՞վ, որդի»: Եղեռնի թեման ավելի ընդգծելու համար Այշենուրն իր երաժշտական ալբոմում, «Ջօրօխի բովուշ» երգի մոտ տպագրել է մի քանի թուրքերեն նախադասություն, որոնցում հիշատակվում է ճորտխի ավազանում գտնվող խոտորչրի գյուղատեղումը: «Մեր տատերն ու պապերը գիտեին այդ հայերի գնալու մասին. «խոտորչրի աքսոր» էին ասում, «խոտորչրի աքսոր»: Լացիր, հա լացիր: Ասել է. «Ճանապարհորդ դարձա, գնում են», «Ցտեսություն», «Մեզ այստեղ թողեք», ասել է. «Ձեզ լավություն կանենք»: «Վշտով են գնացել, չեն կարողացել բաժանվել, լացելու բաներ ...»: Այսքանը: Խոսքի այս ծվենները կարծես քամին է անցյալից՝ 1915-ից բերել, հասցրել մեր օրերը:

Բայց ովքե՞ր են, ինչ երկխոսություն է: Այս պատմությանն ավելի մանրամասն ծանոթանալու համար, թուրքա-




երգչախմբի անդամներ, մեկը՝ Սուլթան Կարաիբրահիմգիլը՝ համշենցի է: Ուրախալի է, որ Աջարիայից 1944թ. Ղազախստան քարոզված համշենահայերի, նաև խոփայի ու Բորչկայի համշենահայերի խաղիկներն իրենց շուրջն են համախմբում Ռիզեի համալսարանի, հայաստանցիներին և պոլսահայերին, դրանով ստանալով խորհրդանշական իմաստ:

տի աղմուկը չի թողնում, որ մայրը լսի երեխայի օգնության կանչերը: Երբ մայրը տեսնում է, թե ինչպես է իր միևնույնը խեղդվում, արդեն ուշ է լինում, ու նա անիծում է. «Ջօրօխին ցենը գըղրի, գաթիրին ծինը գըղրի», այսինքն՝ ճորտի ծայնը կտրվի, ջորիի ծինը կտրվի: Այդ օրվանից լայնահուն ճորտից հոսում է անձայն, ավելի ճիշտ՝ ծորում է, դառնում է ծորող գետ, իսկ ջորիներն էլ

գետ Լուսինե Սահակյանին խնդրեցի Այշենուր Քուկարին իմ անունից հարցում ուղարկի: Շուտով ստացանք պատասխանը, որից որոշ հատվածներ ներկայացնում են Լուսինե Սահակյանի թարգմանությամբ. «2001 թ. Չիկագոյի համալսարանում դոկտորանտուրայում սովորող իմ հայ ընկերուհի Մելիսա Բիլալի հետ սևծովյան շրջանի կանանցից որոշ երգեր ծայնագրեցինք: Էլկիթում (Եղնովիտում) մասնակցեցինք Վարթևորի տոնին: Մարդիկ իմանալով, որ այնտեղ ուսումնասիրություններ ենք անում, մեզ մի քանի կանանց հետ ծանոթացրեցին:

Իմ ալբոմում տեղ գտած այդ հատվածն ասող կինը մեզ պատմեց նաև ջիների, փերիների, ջաղունների մասին հին հեքիաթներ: Երբ նա թուրքերեն «օրում-





ջեք» (սարդ) բառի փոխարեն «սայթ» ասաց (կրոնափոխ համաշխարհային մի մասը սարդին սայթ է ասում - Ս.Վ.), Մելիսան և Ես, հասկանալով «սայթ» բառի իմաստը, կարծես նրա ու մեր միջև զգացման հնուց եկող մի ընդհանուր լեզու, մի միություն: Ես էլ կհիշեմ, իմ աշխատանքներում, երբեք չեմ հարցրել, թե այստեղ հայեր եղել են և նման բաներ: Մարդկանց անհանգստություն չեմ ցանկացել պատճառել: Եթե նրանք ցանկանան, կպատմեն: Այս կինը, ոտքի կանգնելով, սկսեց պատմել, որ այստեղը ամողջը հայերին է եղել: Կինը ողբասաց կանանց նման լացուկոծով սկսեց պատմել: Այդ ընթացքում տան ներսից հարսը եկավ: Քանի որ տունը փայտաշեն էր, կնոջ պատմածները ներսից լսել էր: Մեզինք բացի սենյակում 10-13 մեծահասակների հետ նաև երեխաներ կային, ովքեր հետաքրքրվելով, շրջապատել էին մեզ: Հարսը գայրոյթով սենյակ մտավ և մեծահասակ կնոջը սաստեց, ասելով, որ «Այդպիսի հիմար բաներ պատմելով՝ երեխաների գլուխները մի խառնիր, ճիշտ բաներ պատմիր»: Մենք շատ տխրեցինք: Խորը լռություն տիրեց: Եղանակը մթնում էր, և դրսից լսվում էր անձրևի ծայնը: Հարսի դուրս գալուն պես կինը կրկին, առանց շփոթվելու, ծնկներին խփելով՝ «Լացելու գործեր, լացելու բաներ էին» ասելով՝ շարունակեց պատմել: Կարծես մեզ պատմելու համար տարիներ ի վեր այս պահին էր սպասել: Պատմեց, թե հայերին ինչպես են խոտորջուր քշել: Հայերի գնալուց հետո մնացողները գնացողների համար սպասել են, հայերի ապրանքները թալանողներին անհծել են, այսինքն՝ իրենց հայ հարևանների համար տխրող, սուգ պահող մարդիկ են եղել: Այս պատմությունն ինձ վրա շատ ազդեց:

Մտածեցի, որ լավ կլինի, եթե ալբոմիս մեջ ընդգրկեմ մի համաշխարհային ողբ: Մանկությունից ի վեր բոլորն ինձ հայերից էին պատմում: Լավ, ո՞ր են այդ հայերը: Ծորոխը դարձավ հայերի գերեզմանը: Մի կամրջի մասին էր խոսվում, որի մի կողմը քանդված էր: Հայերը, որոնց ստիպում էին անցնել այդ կամրջը, բոլորը ջուրն էին ընկնում: Ծորոխն այնքան շատ մարդկանցով էր լցվել, որ ջուրը չէր երևում, օրերով արյուն էր հոսում: Ցանկացա, որ Ծորոխի մասին մի ողբ լինի իմ երգացանկում: Մահիր Եօզբանն էլ ասաց, որ համաշխարհային մի պատմություն գիտեն, թե ինչպես է կինն անհծում Ծորոխին, որի ջրերում իր տղան խեղդվել է: Ես Մահիրի հետ այդ պատմության հիման վրա ստեղծեցի այս ողբը»:

Ահա այսպես, բռնի իսլամացումից երեք հարյուր տարի հետո, չգիտեմ որ սերնդից մի երիտասարդ երգչուհի, հայերեն չիմանալով, հայերեն ողբեր ու խաղիկներ է երգում հենց Ստամբուլում, ու իր նուրբ ձեռքերով քաջաբար ձեռնոց նետում շատերին:

Ջօրօխի քօլուշ
 Օրթի՛, իմ Մուրադ օրթի,
 Այէ՛, այէ՛, օրթի,
 Դա՛, մերնուշէ վօրդա՛դ էր, օրթի՛,
 Թուն վօրդա՛դ էր, օրթի՛:
 Ջէրնագ ջագդիդ ու
 Բիձիգ բօյիդ մադաղ էլլիմ, օրթի՛,
 Դա՛, իմ Մուրադ օրթի՛,
 Դա՛, յէս քէգի, օրթի՛,
 Ջօրօխին համա՞թ թա ուննացի, օրթի՛:
 Ինչուք հիմի արածնիյէ, օրթի՛,
 Հէրքէ՞ց օջ թա Ջօրօխին, օրթի՛,
 Աղուն քալեց քանի օր ու, օրթի՛,
 Գէշթացա՞վ օջ թա, օրթի՛:
 Ջօրօխին ցէնը զըդրի, օրթի՛,
 Գաթիրին ծիւնը զըդրի, օրթի՛,
 Մէզը շէբէցուց, վարցքէց, օրթի՛
 Մէգէ արավ ու դարավ, օրթի՛:
 Լէրինէ փոսիյէ, օրթի՛,
 Մէրալին մէջնիյուս թէրջօ՞ղ էդ թա, օրթի՛,
 Մէձէնցօղ է, օրթի՛,



Հարսնիք էնօղ ու գարթօղ է, օրթի՛:
 Անուշ Մուրադ, օրթի՛,
 Էրանդ Մուրադ, օրթի՛,
 Բիձիգ Մուրադ, օրթի՛,
 Քէգի յէսիր էլլիմ, օրթի՛:

Ճորոխի ողբ
 (թարգմանություն)
 Որդի՛, իմ Մուրադ որդի,
 Արի՛, արի՛, որդի՛,
 Դա՛, մեռնելը որտե՛ղ էր, որդի՛,
 Դու որտե՛ղ էիր, որդի՛:
 Ճերմակ ճակատիդ ու
 Փոքր բոյիդ մատաղ լինեմ, որդի՛,
 Դա՛, իմ Մուրադ որդի,
 Դա՛, ես քեզ, որդի՛,
 Ճորոխի համա՞ր ունեցա, որդի՛:
 Մինչև հիմա վերցրածները, որդի՛,
 Ճորոխին չհերիքե՞ց, որդի՛,
 Քանի օր արյուն հոսեց՞, որդի՛,
 Չկշտացա՞վ, որդի՛:
 Ճորոխի ծայնը կտրվի, որդի՛,
 Ջորիի ծիւնը կտրվի, որդի՛,
 Մեկը խփեց, ցած գցեց, որդի՛,
 Մեկը առավ ու տարավ, որդի՛:
 Յայլայի հանդակներում, որդի՛,
 Դեպի մշուշի՞ մեջ էի՞ր վազում, որդի՛,
 Մեծացնելու էի, որդի՛,
 Հարսանիք անելու ու ամուսնացնելու էի, որդի՛:

Դա՛, իմ Յուսուֆ օրթի
 Այէ՛, այէ՛, օրթի՛,
 Դա՛, քէգիգի մադաղ էլլիմ, օրթի՛,
 Այէ՛, այէ՛, օրթի՛,
 Աշուն աղավ ու ցէմէրէ էյէ՞վ թա, օրթի՛,
 Այէ՛, այէ՛, օրթի՛:
 Դասէ դարի ծագի մէջէ, օրթի՛,
 Մընացէ՞ր թա, օրթի՛,
 Սիրդէդ փէթեցա՞վ թա, օրթի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ օրթի՛,
 Հօքուդ մադաղ էլլիմ, օրթի՛,
 Այէ՛, այէ՛, օրթի՛:

Մէձ դարդ ունէդի՞ ու օրթի
 Ինձի ասէլ չգարցէ՞ր թա, օրթի՛,
 Այէ՛, այէ՛, օրթի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ օրթի՛:
 Ջէրնագ ջագդիդ ու էրգէն քընթիդ, օրթի՛,
 Մադաղ էլլիմ, օրթի՛,
 Այէ՛, այէ՛, օրթի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ օրթի՛:
 Դա՛, քէգի համա ամար չգար,
 Քիդէդի՞ թա, օրթի՛,
 Անու համա ցէմրան
 Քէնացէ՞ր թա լէրն ի վէր, օրթի,
 Այէ՛, այէ՛, օրթի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ օրթի՛:

Դա՛, իմ Յուսուֆ որդի
 (թարգմանություն)
 Արի՛, արի՛, որդի՛,
 Դա՛, քեզ մատաղ լինեմ, որդի՛,
 Արի՛, արի՛, որդի՛,
 Աշուն եղավ ու ծնե՞մ եկավ, որդի՛,

Արի՛, արի՛, որդի՛:
 Տասը տարի բանտի՞ մեջ, որդի՛,
 Մնացի՞ր, որդի՛,
 Սիրտդ փտե՞ց, որդի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ որդի,



Հոգուդ մատաղ լինեմ, որդի՛,
 Արի՛, արի՛, որդի՛:
 Մեծ վիշտ ունեի՞ր ու, որդի՛,
 Ինձ ասել չկարողացա՞ր, որդի՛,
 Արի՛, արի՛, որդի՛,
 Դա՛, իմ Յուսուֆ որդի:
 Ճերմակ ճակատիդ ու երկար քթիդ, որդի՛,

Նորհարս էլլիմ
 Չէքտէս խաղփուլի յա,
 Մէջուս ալ փօջօր քալ չի,
 Իսա քաղիս դադաքէ
 Ինձի ալ ումիշ քալ չին:
 Գալաթէ լէրթէգ արի,
 Հէրու ջանփա քալէցի,

Դա՛, քէգի սէվդա դէվի,
 Յէս ինձիգի քօլեցի:
 Շաղ էրանդ իմ, շաղ էրանդ,
 Քէլխուս ալ իփաղ ունիմ,
 Խիզօյի քյաղին մէջէ
 Չախալ աչվի յար ունիմ:
 Նորհարս էլլիմ, ինչալլահ,
 Դուն ավէլիմ, մաշալլահ,
 Քու դաղին ու քու մօրէ
 Քուրբա քօրծիմ, ինչալլահ:
 Չիյափան հէդ թեր արի,
 Խաղվին էնօղ ում դէյի,
 Քյաղին մէջ յար հազ այի,
 Էնմէն օր դէսնում դէյի:
 Արաքազ իմ, թիբաձ իմ
 Օնջուրուդ գյուբաղնիյուս,
 Լուսնիկա իմ, չարագդած իմ
 Սէվդային օղանիյուս:

Նորահարս լինեմ
 (թարգմանություն)
 Ժակետս գույնզգույն - փայլվիւուն է,
 Գոտկատեղիս չի բոլորվում,
 Այս գյուղի տղաները
 Ինձ էլ համապատասխան չեն:
 Կողովը մեջքիս դրեցի,
 Հեռու ճանապարհ գնացի,
 Դա՛, քեզ սեր տվեցի,
 Ես ինձ այրեցի:
 Շատ սիրուն եմ, շատ սիրուն,
 Գլխիս էլ մետաքսե գլխաշոր՞ ունեմ,
 Խիզո գյուղում
 Կապուտայա յար ունեմ:
 Նորահարս լինեմ, ինչալլահ,⁶
 Տուն ավելեմ, մաշալլահ,⁷
 Քո հորն ու քո մորը
 Գուլպա գործեմ, ինչալլահ:
 Քաղաքից՞ թել առա,
 Որ գարդանախշ անեմ,

Գյուղում յար սիրեցի,
 Որ ամեն օր տեսնեմ:
 Արեգակ եմ, դիպել եմ
 Անճուռուտի՞ լանջին,
 Լուսին եմ, լուսավորել եմ
 Սիրածիս սենյակը:
 1. Դա- դիմելաձև արական սեռի ներկայացուցիչներին:
 2. Բնագրում քալեց, նշանակում է քայլեց, գնաց, այստեղ հոսեց:
 3. Բնագրում մերթալ, որ նշանակում է ամպ, օգտագործվում է նաև մշուշ իմաստով, հաճախ այդ իմաստը շեշտելու համար ասում են ցածր ամպ ցածմէրալ:
 4. Բնագրում ձագ-ծակ, փոխաբերական իմաստով բանտ:
 5. Բնագրում իփաղ-մետաքս, նշանակում է նաև մետաքսե գլխաշոր:
 6. Ինչալլահ- եթե Ալլահը կամենա: Աստված տա:
 7. Մաշալլահ- գովեստի, գոհունակության, գարմանքի բացականչություն: Աստված չար աչքից պահպանի:
 8. Բնագրում ձիյափ է, որն ունի երկու իմաստ. գյուղացիները ձիյափ են ասում ծովափնյա քաղաքին, Խոփային, որտեղ գտնվում են խանութները: Խոփացիները ձիյափ են ասում քաղաքի կենտրոնական, առևտրական աշխույժ մասին:
 9. Բնագրում օնջուրա - անճուռա, անջորան, խոտաբույսի անուն է: Օնջուրուտ՝ օնջուրայի աճելու վայր:

ԱՅՆ ՊՆԴՈՒՄԸ, ԸՍՏ ՈՐԻ՝ ԹՈՒՆՋԵԼԻԻ 90 ՏՈԿՈՍԸ ՀԱՅԵՐ ԵՆ

«Ակունքի» խմբագրու-
թյունն առանց կրճա-
տումների թարգմանաբար ներ-
կայացնում է Կ.Պոլսո հայոց
պատրիարքի գլխավոր փոխա-
նորդ Արամ Աթեջյանի հարցազ-
րույցը, որ նա տվել է «Bugun»
հեռուստատեսության հաղորդավար
Էրթամ Թուֆանին:

«Bugun» հեռուստատեսությամբ
Էրթամ Թուֆանի «Վերլուծու-
թյուն» հաղորդման հյուր՝ Պոլսո
հայոց պատրիարքի գլխավոր
փոխանորդ Արամ Աթեջյանը
կարևոր մեկնաբանություններ
արեց: «Թուրքիայում 100 հա-
զարից ավելի գաղտնի հայ կա»
պնդմամբ հանդես եկած Աթեջ-
յանը նաև պաշտպանեց այն
տեսակետը, թե Թուրքիայի
(Դերսիմ-Ակունքի խմբ.) նա-
հանգի 90 տոկոսը հայեր են:

Արամ Աթեջյան- Երբ եկեղե-
ցի է գալիս, իր ով լինելը բացա-
հայտում է. նրա բոլոր հարևան-
ները հասկանում են, թե ինչ է
նա իրականում: Սակայն թեև
ոմանք չեն համարձակվում
հայտնել իրենց ինքնությունը,
այնուամենայնիվ, գալիս են, այ-
ցելում են եկեղեցի: Օրինակ՝
անցյալ տարի Չատիկը Ստամ-
բուլում նշելուց մեկ շաբաթ անց
պատարագ մատուցեցի նաև
Դիարբեքիրում. եկան մոտ 400
հոգի:

Էրթամ Թուֆան Աթալ-
Դրանք այն գաղտնի հայերն են,
որոնց մասին խոսում էք:

Արամ Աթեջյան- Նրանցից
200-ը գտարյուն մուսուլման եղ-
բայրներն են, իսկ 200-ը՝ հայկա-
կան ծագմամբ:

Էրթամ Թուֆան Աթալ- Սա-
կայն ծպտյալ եղողներն այնտեղ
պատարագին որպես ծպտյալ
եկան-մասնակցեցին, ասացին՝
այլևս գաղտնագերծում ենք մեր
ինքնությունը:

ԾՊՏՅԱԼ ՀԱՅ ԵՆ ՆԱԵԿ ԻՄ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ

Արամ Աթեջյան- Սակայն
նրանք չեն վերադառնում քրիս-
տոնեության, քանի որ վերա-
դառնալու դեպքում աշխատան-
քից դուրս կշարտվեն, եթե աշ-
խատում են պետական գրա-
սենյակներում: Հարևանը կա-
րող է անհանգստացնել նրանց:
Նման դեպքեր գրանցվում են.
Իմ ընտանիքն էլ է ներկայում
որպես մուսուլման ապրում Դի-
արբեքիրի Սիլվան գավառում:
Այնտեղ ավագ քրոջս զավակ-
ներն են: Ոմանք վերադարձել
են իրենց արմատներին: Նրանք
1950-ական թվականներին
հարկադրանքով են իսլամաց-
վել: Քրոջս ամուսնուն ասել են՝
եթե մահմեդական չդառնաս,
քեզ կսպանենք, և այդ կերպ
մուսուլման են դարձրել: Ես ծն-
վել եմ 1954 թ., ավագ քույրս
մահմեդական էր դարձել, երբ 4-
5 տարեկան էի:

Էրթամ Թուֆան Աթալ-
Իրապե՞ս էր մուսուլման դար-
ծել:

Արամ Աթեջյան- Իրապես չի
կարող մուսուլման դառնալ. չեք
կարող նրա ներաշխարհը փո-
խել: Քրոջս ամուսինը ճնշմամբ
է մահմեդական դարձել և հար-
կադրանքով էլ քրոջս է մահմե-
դականացրել: Ավագ քույրս
գաղտնի կերպով խաչ էր կրում,
հայերեն խոսում, բայց բոլորի
կողմից պատվում էր՝ կրոնը
փոխած լինելու պատճառով:

Էրթամ Թուֆան Աթալ-



Անո՞ւնն էլ է փոխել:

Արամ Աթեջյան- Այո, փոխել
է: Քրոջս ամուսինը հարկադ-
րանքով է մուսուլման դարձել և
բռնությամբ՝ քրոջս մահմեդա-
կանացրել: Ասել է՝ ես իսլամա-
ցել եմ, դու էլ ես պարտավոր
մահմեդական դառնալ, և ինք-
նությունը փոխել:

Էրթամ Թուֆան Աթալ- Չեք
քրոջ ամուսինն ու ավագ քույրը
մահմեդականի անձնագիր են
հանել, և նրանց երեխաների
անուններն էլ հայկական չեն
եղել: Ճիշտ են հասկացել, այն-
պես չէ՞:

Արամ Աթեջյան- Անձնագիր
են հանել և որպես մուսուլման
ապրել: Նրանց զավակներն էլ
են որպես մահմեդական ապրել:
Նրանց անուններն էլ են իսլա-
մական: Նրանց թոռներն էլ են
մուսուլման եղել: Ի՞նչ է եղել. ես
կորցրել եմ նրանց:

Էրթամ Թուֆան Աթալ-
Իրականում չեք կորցրել.
նրանք քրիստոնյա են հոգու
խորքում:

Արամ Աթեջյան- Ի՞նչ տար-
բերություն. իմ եկեղեցու անդա-
մը չեն, ես չեմ կարողացել մկր-
տել նրանց, չեմ էլ կարող:

Էրթամ Թուֆան Աթալ-
Իհարկե, դուք էլ նման խնդիր
ունեք, այնպես չէ՞: Քրիստոնեա-
կան հավատքի համաձայն՝
պարտադիր է, որ քրիստոնյան
մկրտված լինի: Չկնքված որևէ
մեկը չի՞ կարող քրիստոնյա լի-
նել: Դժո՞խք է գնալու, թե՞ դա
մեղք է համարվում: Նախ՝ հաս-
կանանք մկրտության խորհուր-
դը:

Արամ Աթեջյան- Դժոխք չի
գնում. նման բան չկա: Հիմա
քրիստոնյա դառնալու համար
մկրտվելը պարտադիր է: Չկնք-
ված ոչ մեկի չեմ կարող իմ եկե-
ղեցի ընդունել:

Էրթամ Թուֆան Աթալ- Լավ,
իսկ Չեք քույրը կարո՞ղ էր
մկրտվել:

Արամ Աթեջյան- Նա մկրտ-
վել է երեխա ժամանակ: Ամուս-
նանալուց հետո է դավանա-
փոխ եղել:

Էրթամ Թուֆան Աթալ-
Շատ լավ, իսկ նրանց երեխա-
նե՞րը:

Արամ Աթեջյան- Չեն կնքվել:
Տեսե՞ք, նրանք 6 զավակ ունեն,
որոնցից մեկը վերադարձել է
քրիստոնեության: Նրա երեխա-
ներն էլ են վերադարձել, ես եմ
վերադարձրել: Հայ են դարձել,
մկրտվել են և ինձ քեռի են ան-
վանում: Մնացած 5-ն ապրում

են որպես մուսուլման:

Էրթամ Թուֆան Աթալ- Լավ,
իսկ չմկրտվելն ըստ կրոնի ի՞նչ
պատասխանատվության է
նրանց ենթարկում: Մեղք գոր-
ծած են համարվում:

Արամ Աթեջյան- Մեղք չեն
գործում, բայց թեքի են համար-
վում: Այն դեպքում, երբ գոյու-
թյուն ունի եկեղեցու, Հիսուս
Քրիստոսի հետևորդ լինելու
գաղափարը, նրանց իմնական
կրոնը հենց դա է:

Էրթամ Թուֆան Աթալ-
Գաղտնի կերպով մկրտե՞ք
նրանց. հնարավոր չէ՞:

Արամ Աթեջյան- Մեր եկեղե-
ցին էլ դա արգելում: Քանի դեռ
նրանց անձնագրում «մուսուլ-
ման» է գրված, ես չեմ կարող
կնքել նրանց. դա է եկեղեցա-
կան օրենքը: Անձնագրում ի՞նչ է
գրվելու՝ թե՞ քրիստոնյա, թե՞
մահմեդական:

Էրթամ Թուֆան Աթալ-
Մի՞թե չի բավարարում այն, որ
դուք գիտեք նրան որպես քրիս-
տոնյա:

Արամ Աթեջյան- Ոչ, չի բա-
վարարում: Հիմա զարմիկս գի-
տի, բայց նրա երեխաները վա-
ղը կմոռանան, որ քրիստոնյա
են. չեն տեղեկանա դրա մասին,
նրանց զավակներն էլ կմոռա-
նան և վերջ:

Էրթամ Թուֆան Աթալ-
Նրանց գործն էլ է բարդ՝ հասա-
րակական ճնշումը. շրջապա-
տում բոլորին մինչ այդ ասել են,
թե մուսուլման են: Հետո միան-
գամից պիտի վեր կենան և
ասեն, թե քրիստոնյա են: Խիստ
բարդ որոշում է, այնպես չէ՞:

Արամ Աթեջյան- Նրանց շր-
ջապատող մարդկանց 80 տո-
կոսն էլ են դավանափոխ հայեր:
Սակայն գինուց բացախ են
դառնում. ավելի թունդ մուսուլ-
ման են լինում:

Էրթամ Թուֆան Աթալ-
Ծպտյալներից ոմանք իրապես
մուսուլման են դառնում ուրեմն:

Արամ Աթեջյան- Պայման-
ներն են այդպես թելադրում.
նրանք հարկադրված են լինում
իրենց ավելի թունդ մահմեդա-
կան ներկայացնել:

Էրթամ Թուֆան Աթալ- Մզ-
կի՞թ են գնում: Այսինքն՝ ի՞նչ էք
հասկանում թունդ մուսուլման
ասելով:

Արամ Աթեջյան- Գուցե մզ-
կիթ էլ չեն գնում, բայց եկեղեցի
էլ չեն հաճախում: Հեռու են
մնում թե՞ մզկիթից, թե՞ եկեղե-
ցուց: Նրանք իրար մեջ են
ամուսնանում: Նայում են՝ ով է

ծագմամբ հայ, և այդ ընտա-
նիքից են աղջիկ ուզում:

Էրթամ Թուֆան Աթալ- Լավ,
իսկ երիտասարդների համար
այդ դրությունը բարդ չէ՞:
Ասենք՝ մեկին են սիրում, ով
ծպտյալ հայ չէ: Ի՞նչ են այնժամ
անում:

Արամ Աթեջյան- Ներկայում
հայերն էլ են այլ կրոններ դա-
վանող մարդկանց հետ ամուս-
նանում: Դա արգելք չի լինում:
Լինի մուսուլման թե՞ մեկ այլ հա-
վատքի հետևորդ՝ մեր երիտա-
սարդներն էլ են ամուսնանում
այլակրոնների հետ: Որևէ ար-
գելք չկա դրանում: Սակայն
ծպտյալ հայերն այդ կյանքն
ակամա են ընտրել: Ես նրանց
մասին եմ խոսում: Երբեմն
ասում եմ նրանց՝ ինչու՞ չեք վե-
րադառնում ձեր արմատներին:
Պատասխանում են՝ եթե
Ստամբուլ գանք՝ միգրացի:
Ստամբուլում շատ վտանգ
չկա: Ջարմիկիս հարցնում եմ՝
ինչու՞ չեք վերադառնում: Պա-
տասխանում է՝ այդ դեպքում իմ
ապրանքների համար մեկ
տասներորդ գինը կվճարեն
կամ էլ՝ ոչ մի բան չեն տա, երբ
վաճառեմ: Նրա նման մեկ ու-
րիշն էլ կա: Կարևոր պաշտոն է
զբաղեցնում: Ասում է՝ եթե հայ-
տարարեմ հայ լինելուս մասին,
ինձ կպաշտոնագրվեն:

Էրթամ Թուֆան Աթալ- Ինձ
հետևյալ հարցն է հուզում. երբ
որևէ ծպտյալ հայ հայտնում է իր
հայության մասին, ինչպիսի՞
զարմանք է ապրում նրա շրջա-
պատը: Նման դեպք պատահե՞լ
է Չեք շրջապատում: Երբ ասում
է՝ ես յոթը պորտով հայ էի, քրիս-
տոնյա, բայց ստիպված եմ եղել
մուսուլման ներկայանալ, ինչ-
պիսի՞ արձագանքներ է ստա-
նում:

Արամ Աթեջյան- Ոչ մի: Սա-
կայն պատահում են նաև բա-
ցասական արձագանք ստա-
ցողներ: Իմ դավանափոխ զար-
միկը, ավելի ճիշտ՝ զարմիկիս
զավակները հարձակման են
ենթակվել, անգամ՝ արմատնե-
րով հայերի կողմից, ովքեր
նրանց ասել են՝ ինչու՞ ես վերս-
տին քրիստոնյա դարձել, և
զարմիկս օրեր շարունակ ար-
տասվել է այնպես, կարծես թե
այլ կրոնի անդամ լինելը մեղք է:
Էրթամ Թուֆան Աթալ- Լավ,
ինձ հետաքրքրում է նաև
հետևյալ հարցը. այդ ծպտյալ
հայերն իրենց զավակներին
ե՞րբ են դրա մասին հայտնում:

Արամ Աթեջյան- Վերջին
շունչը փչելիս: Մեծ մայրերն ու
մեծ հայրերը դրա մասին հայտ-
նում են, երբ նրանց վերջին
օրերն են մոտենում:
Էրթամ Թուֆան Աթալ-
Նման դեպքեր դեռ պատահում
են, այնպես չէ՞: Առավելապես
ո՞ր բաղաբներում:

Արամ Աթեջյան- Բազմաթիվ
բաղաբներում: Օրինակ՝ Դիար-
բեքիրում, որտեղ որպես հայ
հայտնի 3-4 ընտանիք է բնակ-
վում, սակայն իրականում ինք-
նություն քրիստոնյա, բայց դրա
մասին չբարձրաձայնող շուրջ
50-60 ընտանիք է առկա: Եթե
միայն իմ զարմիկներին, քրոջս
թոռներին հաշվենք, միայն

նրանք արդեն 25 հոգի կկա-
մեն:

Էրթամ Թուֆան Աթալ-
Նրանց կրոնական մոտիվացի-
ան ապահովելու համար, որ-
պես եկեղեցի, նրանց ծառայու՞մ
եք:

Արամ Աթեջյան- Մենք չենք
կարող նրանց ծառայել: Ի՞նչ
ծառայություն կարող ենք մա-
տուցել, որ... Նրանք քրիստոն-
յա չեն, եթե անգամ արյամբ և
հոգով են: Ես չեմ կարող նրանց
սպասարկել: Անձնական, ազ-
գակցական վերաբերմունքից
բացի՝ ոչ մի ծառայություն չեմ
կարող մատուցել՝ որպես եկե-
ղեցի: Սակայն եթե մկրտվեն,
փոխեն իրենց ինքնությունը,
քրիստոնյա դառնան, դա ուրիշ
բան:

ԹՈՒՆՋԵԼԻԻ (Դերսիմ-Ակունքի խմբ.) 90 ՏՈԿՈՍԸ ՀԱՅ Է

Էրթամ Թուֆան Աթալ-
Ասում են՝ Թուրքիայի կողմերում
բազմաթիվ ծպտյալ հայեր կան,
դա ճի՞շտ է:

Արամ Աթեջյան- Ճիշտ է:
Թուրքիայի թերևս 90 տոկոսը
ծպտյալ հայեր են: Կհարցնե՞ք
ինչու: Ինձ մոտ եկավ 30 տարե-
կան մի երիտասարդ և ասաց՝
«Իմ ծագումը հայկական է: Ես
ուզում եմ վերադառնալ իմ կրո-
նին»: Ասացի՝ «Ապացուցի՛ր»,
չկարողացավ ապացուցել, ես էլ
չընդունեցի:

Սակայն համառորեն գնաց-
եկավ, չիրաժարվեց: Գնացե-
կավ, ինձ անհանգստացրեց,
ավելի ուշ ինձ զանգահարեց
նրա հայրը և ասաց. «Պարոն,
ես քաղաքապետ եմ, երբ պաշ-
տոնաթող լինեմ, ես էլ եմ գալու
Ստամբուլ և դավանափոխ լի-
նելու: Այստեղի բնակիչների 90
տոկոսը հայեր են: Ընդունի՛ր»:

Ես էլ ընդունեցի: Մասնակ-
ցեց դասընթացին, մկրտվեց,
մեր եկեղեցու անդամը դար-
ծավ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՀԱՅՐՆ Է, ԹՈՒՐԹԻԱՆ՝ ՄԱՅՐԸ

Էրթամ Թուֆան Աթալ-
Թուրքիայի հայերի համար ի՞նչ
է նշանակում Հայաստանում կր-
թություն ստանալը:

Արամ Աթեջյան- Նշանակում
է՝ այնտեղ հայրս է, այստեղ էլ՝
մայրս, որովհետև մենք Հայաս-
տանը հայրենիք ենք անվա-
նում, իսկ Թուրքիան՝ մայր հայ-
րենիք (բառախաղ է, որը հիմն-
ված է այն փաստի վրա, որ հա-
յերենում հայրենիք բառը կազմ-
վում է «հայր» բառից, իսկ թուր-
քերենում՝ «մայր»-Ակունքի
խմբ.): Մենք՝ Թուրքիայի հա-
յերս, մոր և հոր արանքում մնա-
ցած երեխաներ ենք. մեր ծնող-
ները վիճում են, մենք՝ լալիս:
Մենք անհամբերությամբ ենք
սպասում, որ մեր ծնողներն
այլևս հաշտվեն, գրկախառն-
վեն՝ ինչ գնով էլ լինի:

Թարգմանեց
ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆԸ
Akunq.net

Հաջողություն քեզ, Սոֆիա

Akunq.net կայքում կարդալով Սոֆիա Հակոբյանի «Գյավուրի վիժվածք» մահմեդականները» հոդվածը, հետաքրքրվեցի թե ո՞վ է հեղինակը: Պարզվեց՝ ուսանողուհի է: Զանգեզի, ծանոթացա: Ծնվել է 1993թ. Ուկրաինայում՝ Կիևում, 2003թ. ընտանյոք վերադարձել է Հայաստան: 2010թ. ավարտել է Երևանի Գոգոլի անվան թիվ 35 դպրոցի ռուսական թեքումով բաժինը: Այժմ սովորում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնի երկրորդ կուրսում: 2008-ից զբաղվում է նաև լրագրությամբ: Նախնիները սասունցի են: Սասունցիների մասին մի քանի հոդվածների հեղինակ է. «Սասունի անվանումն ու պատմությունը», «Սասունում հայկական մշակույթը», «Ուլքեր են Սասնա ծեղրը», «Սասունցի գաղթականի սիրային նամակը», որոնց թուրքերեն թարգմանությունները տեղադրել է իր իսկ համահեղինակությամբ ստեղծված sasun.org կայքում: Սոֆիան 2011թ. եղել է Սասունում իրենց հայրենի Գելիցյուզան գյուղում, նաև Մրջգյուղում, այլուր, և այդ այցելության արդյունքն է նրա «Արաբացած հայեր Սասունում» հոդվածը, որը կտպագրենք մեր թերթի առաջիկա համարներից մեկում: Նա ցանկանում է ֆիլմ նկարահանել Սասունի և մահմեդական հայերի մասին:

Քանի որ Ստամբուլում ազգականներ ունի, ուստի հաճախ է լինում այնտեղ, հենց Ստամբուլի Քաղաքային խորհուրդում էլ 2013թ. հունվարին հանդիպել է «Գյավուրի վիժվածք» մահմեդականները» հոդվածի հեղինակին:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թուրքիայում «դյոնմե» կրոնափոխ բառն օգտագործելիս միանգամից շատերն են այս ու այն կողմ մատնանշում: «Ահա, այստեղ կան, այնտեղ կան...»:

Ու մի պահ կարելի է մտածել, որ նրանք ամենուր են, ամեն քայլափոխի... Մեզանում նրանց մասին խոսակցությունները սահմանափակվել են Ցեղասպանության վերաբերյալ քննարկումներով, Պոլսի հայկական համայնքում նրանք չկան, իսկ թուրքական հասարակության մեջ նրանց խնդիրն ընդհանրապես պաշտոնապես գոյություն չունի: Ովքեր են երկու կողմից փոքրամասնություն համարվող այդ հայերը...

Քրիստոնյա են, բայց քրիստոնյա չեն, մահմեդական են, բայց մահմեդական չեն: Իրականում ապրում են, գոյություն ունեն, բայց փաստացի ոչ մի համայնքում չկան:

Ցեղասպանության վերաբերյալ հայկական գրականության մեջ տևական ժամանակ «մահացածների» կամ այս ու այն կերպ հայ ազգի շարքերից «վերացածների» շարքում գտնող մահմեդականացած հայերի կյանքը 1915թ. հետո չի ընդհատվել...

Ցեղասպանությունից հետո արդեն չորրորդ սերնդի ներկայացուցիչ 17 տարեկան էլիֆը (հեղինակը նյութում նրա անունը փոխված է ներկայացումը՝ նրա իսկ ցանկությամբ-Ակունքի խմբ.) պատմում է իր կյանքի պատմությունը: Ավելի ճիշտ՝ այն, ինչ հասցրել է իմանալ այդ պատմության մասին:

«Ընտանիքիս անդրադարձնալիս առաջինը տատկիս եմ հիշում... Մինչև վերջին շունչը նամազ է արել, բայց բոլորը շրջապատում նրա մասին

«ԳՅԱՎՈՒՐԻ ՎԻՇՎԱԾՔ»

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԸ

Սոֆիա Հակոբյան



փսփսում էին՝ «գյավուրի վիժվածք» ասելով... Ատում են, թե հայերեն խոսել իմացել է, բայց ես երբեք չեմ լսել:

Ընդհանրապես, չկա այն սերունդը, որը կպատմի ինձ իմ ընտանիքի մասին կամ գոնե հայերեն մի քանի բառ կսովորեցնի... Մաս-մաս, կցկտուր տեղեկություններ կան միայն: Մայրս ընդամենը ասել է, որ իր տատիկի անունը Հուլնակ է եղել: Մեր ազգանունն էլ հին հայերենով ինչ-որ բան էր նշանակում, բայց չեմ կարող հիշել՝ ինչ... Դերսիմից են եղել:

Գաղթել են, հետո նորից վերադարձել, մահմեդական դարձել: Եթե հիմա մեծերը, այդ սերունդը ողջ լինեի..., շատ բան կհարցնեի...

Ծնողներիս ոչ նամազ անելիս եմ տեսել, ոչ էլ խաչակնքվելիս: Երբեք չեմ նկատել, որ ատելության խոսքն թուրքերի մասին, բայց հաստատ դրական զգացումներ չեն ունեցել մահմեդականների հանդեպ: Բավական ժամանակ է, ինչ եկեղեցի եմ գնում: Ես իսկապես չեմ հիշում՝ երբ ամեն ինչ սկսվեց: Մերոնք երբեք չեն խոսել կրոնի ու նման բաների մասին: Հայրս և մայրս... Իհարկե, միշտ էլ իմացել եմ մեր ծագման մասին, բայց ինչպե՞ս ասեմ... Ծնողներս մանրամասներ երբեք չեն պատմել, բայց չեն էլ հերքել: Ես շատ հետաքրքրասեր եմ, բայց նրանք երբեք չեն հետաքրքրվել, փորձել... Երբ մորս հարցում եմ այդ մասին, ասում է. «Առանց այդ էլ ապրածներս ինձ բավական են, էլ ի՞նչ փորձեմ... Ի՞նչ ես ուզում իմանալ... Լավ, մենք ո՞չ հայ ենք, ո՞չ թուրք, ո՞չ էլ քուրդ: Մարդ ենք: Այսքանով սահմանափակվիր, աղջիկս»:

Բոլորս նույն զգացումով ենք ապրել, ամեն կողմից վտարված լինելու զգացումով: Հայրս դեռ դիմադրում է, իսկ մայրս հաշտվեց իմ այս վերաբերմունքի հետ, ինձ նույնիսկ խաչ է նվիրել... Սակայն երբեք իրենց որևէ կրոնի կապված չեն զգացել: Մահմեդականների համար «գյավուր» են եղել, քրիստոնյա հայերի համար էլ՝ «տաճիկ»:

Գուցե սա է ծնողներիս հակազդեցության պատճառը՝ չգիտեմ... Կարծում եմ, որ փորձել են ինքնապաշտպանվել... Այսինքն՝ «Ես ձեզ հետ գործ չունենամ, դուք էլ ինձ ձեռք մի տվեք» մտայնությամբ...

Այդպիսի զգացում կա... Ես փորձեցի հաղթահարել այն, համեմայն դեպս հիմա, որ արդեն խոսում եմ այդ մասին, նշանակում է՝ ինքս ինձ հաղթահարել եմ... Բայց ինչքան բան ենք

բաց թողել... Ավագ եղբայրս, ում այդքան սիրում եմ և այդքան մոտ եմ... Երբեք չեմ իմացել, որ նա էլ է իմ զգացումներով ապրում: Սկսել ենք միասին եկեղեցի գնալ: Կարծում էի, թե ընտանիքում միայն ես եմ, որ նման դիրքորոշում ունեմ, սակայն արի ու տես՝ եղբայրս անգամ մկրտվելու ցանկություն է հայտնում...

Երջանիկ մարդ եմ ինձ զգում այդ պահին ու միևնույն ժամանակ ինքս ինձ մեղադրում, թե այդ ինչպե՞ս եղավ, որ այսքան տարի ոչ ես եմ լսել իմ եղբոր հոգին, ոչ էլ նա է պատմել իր հոգու մեջ ծվարածների մասին: Միասին նստում ենք ու փսփսում, միմյանց ցավերը կիսում ու ծրագրում՝ ինչպես ենք միասին գնալու, որ մկրտվենք: Բայց արի ինչո՞ւ այսքան ուշ... Եթե միայն իմանայի... Կախ էլ դա, ո՞չ... Ուղղակի բոլորս նույն դաստիարակության միջով ենք անցել. չենք իմացել, որ կարելի է հարցնել... Պատկերացում չունեինք, որ կարող ենք հետաքրքրվել այդ ամենով: Բոլորս ենք այդ դաստիարակության գոհը... Ես ինչպես մեղադրեմ այն թուրք երեխային, որն առանց հասկանալու՝ դպրոցում պարտադիր արտասանում է. «Ի՛նչ երջանիկ եմ, որ թուրք եմ ծնվել»: Ես այդ երեխային չեմ կարող առել այն բանի համար, որ նա ինձ է առում, այն բանի համար, որ նա ստիպված է ինձ առել: Հեռուստացույցը միացնեմ թե չէ, նողկանք եմ ապրում... Չեմ ուզում մեղադրել որևէ մեկի... Դպրոցում էլ փորձում եմ ինձ տիրապետել, բայց երբեմն չեմ դիմանում ու պոռթկում եմ:

Քուրդ ընկերներս, օրինակ, ասում են. «Դե. մեր պապերին ասում էին՝ 7 հայ սպանող դրախտ կգնա»: Ուզում եմ գոչել. «Այդքան հիմար բան ասել չես կարող, եղբայր», բայց ի՞նչ ասեմ արի... Այդ մասին հանգիստ խոսում ու պատմում եմ և գուցե հիմա էլ եթե կանգնեն ու ասեն՝ 7 հայ սպանող դրախտ է գնալու, շատերը նույնը կանեն: Կարծում եմ՝ կան նման մարդիկ... Եթե կարող եմ հանգիստ ասել՝ «Պապս այսքան հայ է սպանել»: Եթե առանց ամաչելու՝ իմ ներկայությամբ կարող եմ նման բաների մասին խոսել, ուրեմն քիչ բանով են իրենց պապից տարբերվում:

Միևնույն ժամանակ շատ տարբեր ընկերներ ունեմ... Շատ անկեղծ ու մտերիմ: Երբ Հայաստանից մի աղջկա հետ էի խոսում... Այնպիսի ծանր զգացողություն ունեցա... Երբ իմացավ, որ հայ եմ, միանգամից ասաց. «Իսկ ինչո՞ւ եք մնացել դրանց մեջ՝ թշնամիների մեջ, ինչպե՞ս ես ասում, որ հայ ես, երբ հայերեն չգիտես: Այ որ գաղթեիք մեզ պես, այդ ժամանակ կասեիր՝ հայ եմ, թե չէ հիմա ի՞նչ գործ ունես՝ մնացել ես թշնամիների մեջ»...

Նախ՝ դա շատ ծանր զգացում առաջացրեց իմ մեջ: Ես հաճախ եմ մտածել այն մասին, թե ինչքան լավ կլինեի՝ մերոնք էլ գաղթեին, ու հիմա այստեղ չմնայինք... Հետո մի պահ հակառակվում եմ ինքս ինձ, մի պարզ բան եմ հասկանում՝ սա իմ հայրենքն է: Այն Թուրքիա կանվանես թե մեկ այլ բան՝ չգիտեմ... Բայց մենք այստեղ շատ ավելի վաղուց ենք, քան այդ «թշնամիներ»: Ինձ ոչ մի գնով իմ հողից չկարողացան պոկել: Դա եմ հասկանում: Իմ պապս էլ է այստեղ ծնվել, տատս էլ, ծնողներս էլ, ես էլ... Ու դա մեկ այլ, անգամ հպարտություն առա-

ջացնող զգացողություն է: Ես այնքան խորն եմ կապված այս հողին, որ... Մենք ամեն գնով մնացինք այնտեղ, որտեղ որ իրականում եղել ենք միշտ:

Նաև գիտեմ, որ հայեր կան, ովքեր ասում են. «Երբեք Թուրքիա ոտք չեմ դնի»... Ա՛խ, եթե տեսնեին այս անտեր մնացած եկեղեցիներն ու խաչքարերը... Ա՛խ, եթե զգային այս ամենը... Ո՞ւմ են թողնում... Այս երկրի ամեն մի ոլորտում հայի հետք կա իրականում: Հիմա ես մեկ մտածում եմ, որ ուզում եմ գնալ այս երկրից, մեկ էլ մտածում եմ, որ դրա իրավունքը գուցե չունեմ... Ինչեղի՞ գնով եմ այստեղ մնացել հայերը... Մնացել եմ: Ո՞ւր գնամ...

Իհարկե, Թուրքիայում էլ են հայերը տարբեր... Շատ մեծ տարբերություն կա Կ.Պոլսի համայնքի ու արևելքում ապրող հայերի միջև... Հայկական համայնքում ես ոչ ոք չունեմ, այժմ ստիպված եմ համբերել, մինչև կկարողանամ մկրտվել... Գուցե չեն վստահում: Հայերեն չգիտեմ, համայնքում ոչ մի ազգական, բարեկամ չունեմ... Զարմանում եմ, երբ մտնում եմ եկեղեցի... Մի պահ այնքան էի վրդովվել այդ օտար հայացքներից, որ էլ չցանկացա հայկական եկեղեցի գնալ: Վիրավորանք չէր, բայց ներփակվեցի իմ մեջ: Ես չեմ կարող մեղադրել այդ մարդկանց. ի վերջո, իրավունք ունեն չվստահելու, ի՞նչ իմանան՝ ո՞վ ես, ի՞նչ ես... Քիչ բան չեն ապրել այս երկրում... Բնական է, որ պետք է տարբեր կերպ ապրեն, տարբեր արժեքներ կրեն իրենց մեջ. ինքնապաշտպանական բնագույն ունեցող փոքրամասնություն... Այդքան հարվածներ կրած համայնք... Այդ պատճառով հասկանում եմ նրանց այս պահվածքն ու մտածելակերպը... Իրենց երեխաները հայկական դպրոցներ են գնում, միասին Իշխանաց կղզիներ են գնում, հարսանիքներին, տոներին կանչում իրար, փորձում են բրահամայնքային ամուսնություններ կազմակերպել... Սովորույթներին հետևել... Չեն ցանկանում, որ իրենց երեխաները թուրքերի հետ հանդիպեն և այլն: Ստիպված են այդ կերպ պաշտպանվել... Սա համայնք է, ըստ էության՝ փակ կառույց, ու մեկ էլ հանկարծ «արտաքին աշխարհից» մեկը գալիս է և ասում՝ ես հայ եմ, հայերեն չգիտեմ, ինձ մկրտեք...

Բայց, օրինակ, հունական եկեղեցում այլ կերպ եղավ. շատ լավ ընդունեցին, նույնիսկ ասացին՝ կարող եմ իրենց մոտ հունարեն սովորել: Հույնի արյուն անգամ չկա իմ մեջ, բայց շատ էական ջերմություն զգացի: Հիմա չեմ ուզում դրանից ելնելով որոշում կայացնել, հուսամ, որ մի օր հայկական եկեղեցում կլինեմ: Համեմայն դեպս, ես այդ ժամանակ բոլորովին այլ կերպ կվարվեմ: Երբ բավականաչափ գիտելիքներ ունենամ, մեծ սիրով կրոնի և լեզվի դասեր կտամ իմ նման հայ երեխաների: Հաճույքով կանեմ դա, անկեղծ...

Հայկական եկեղեցու մոտակայքում հայերեն խոսող մորաքույրներ կան, վախեցա մոտենալ և ասել՝ «Ինձ նույնպես սովորեցրե՞ք»...

Մայրս և հայրս լռում են, երբ խոսում եմ այս թեմայով... Բայց զգում եմ, որ ներքուստ երջանիկ եմ: Գուցե այն պատճառով, որ անում եմ այն, ինչը չեն համարձակվել անել իրենք»:

ՔՈՒՅՐ ԴՊՐՈՑՆԵՐ

2012թ. տարեկերջին Երևանում էր Արխագիայի Գագրայի շրջանի Ցանդրիփչի (նախկին Գանթիադի) ավանի Ավ. Իսահակյանի անվան թիվ 1 հայկական միջնակարգ դպրոցի տնօրեն Ռիմա Փափազյանը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում այնքան քիչ են Արխագիայից հյուրեր գալիս, որ շտապեցի նրան հանդիպել, նաև առիթից օգտվելով, նրա հետ Արխագիա «Ձայն համշենական» թերթի մի կապոց ուղարկել:

- **Տիկին Փափազյան, խնդրում եմ պատմեք, որքան ժամանակ է, որ տնօրեն եք աշխատում:**

- Տնօրեն եմ աշխատում 2011թ. նոյեմբերից, մինչ այդ դպրոցի ուսնապարն էի, նաև կենսաբանություն էի դասավանդում: Իմ հարազատ դպրոցն է, այնտեղ եմ սովորել, ավարտելուց հետո ուսումնա շարունակել եմ Ռուսաստանում:

- **Ռուսաստանում կրթություն ստանալով, դժվար չէ՞ր հայերեն դասավանդելը:**

- Սկզբում էր դժվար, բայց արագ հաղթահարեցի:

- **Իսկ Ձեր դպրոցում կա՞ն առարկաներ, որ ռուսերեն են դասավանդվում:**

- Այո՛, Արխագիայի պատմությունը, որովհետև հայերեն դասագիրք չկա, Արխագիան է հրատարակում: Որոշ դասարաններում մաթեմատիկան ևս ռուսերեն է դասավանդվում:

- **Ես գիտեմ, որ Արխագիայի հայկական դպրոցների մի մասում, ուսուցիչների պակասի պատճառով, շատ առարկաներ ռուսերեն են անցնում:**

- Ցավոք, այդպես է, հենց մեր հարևան Լափստարիսա, նախկին Ջարյա Կավկազ գյուղի հայկական միջնակարգ դպրոցում հայերեն են դասավանդվում, կարծեմ, միայն հայոց լեզու և գրականություն առարկաները:

- **Ձեր դպրոցում քանի՞ աշակերտ կա, նրանց թիվն ավելանո՞ւմ է, թե՞ նվազում:**

- Անցյալ տարի ունեինք 141, այս ուստարում 153 աշակերտ, այսինքն սովորողների թվով Արխագիայի հայկական դպրոցների մեջ, Սուխումից հետո, երկրորդն ենք:

- **Քանի՞ առաջին դասարանի ունեք:**

- 11:

- **Շատ քիչ է: Իսկ Արխագիայից արտագաղթածները վերադառնում են:**

- Ոչ շատ: Հայաստանից են գալիս մեր մոտ բնակվելու, օրինակ, վերջերս մի ընտանիք եկավ, 5 երեխա ունեն:

- **Ովքե՞ր են գալիս, ծագումով Արխագիայից են:**

- Ոչ, պարզապես հայաստանցիներ են, տուն են վարձում, այստեղ-այնտեղ աշխատում են, առևտուր են անում, սրճարաններում են աշխատում ուրիշների մոտ:

- **Փաստորեն, Արխագիայում էլ լավ վիճակում չեն:**

- Այո, բայց ասում են Հայաստանում իրենց վիճակն ավելի վատ է եղել: Ընտանիքներ են գալիս, որոնց անդամները սիրված են Ռուսաստանում, Ուկրաինայում...

- **Իսկ եկողների մեջ ուսուցիչներ կա՞ն:**

- Այո: Մեր դպրոցն ուներ մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների պակաս, այն էլ այս տարի Հայաստանից ուսուցիչ եկավ:

- **Դու՞ք էիք հրավիրել:**

- Ոչ, ինքն էր տեղափոխվել: Ես մասնակցում էի դպրոցների տնօրենների խորհրդակցությանը, ինձ մոտեցավ մի տնօրեն, արխագուիի, ասաց, որ նրա ընկե-



րուհին Հայաստանից է եկել, ուզում է աշխատել: Հարցրեցի՝ ի՞նչ մասնագետ է: Ասաց ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչուհի է: Մենք էլ հենց այդ առարկաների ուսուցիչ չունեինք:

- **Ցանդրիփչի՞ում է ապրում:**

- Ոչ, Լեսելիձե գյուղ չհասած, այնտեղ տուն են առել, քոչը հետ են ապրում, 27 տարվա փորձառու մանկավարժ է, 52 տարեկան է, Երևանում է աշխատել:

- **Ծագումով Արխագիայից՞ է:**

- Ոչ, հայաստանցի է: Քույրը ընտանիքով է եկել:

- **Իսկ Դուք ծագումով որտեղացի՞ եք, Ձեր նախնիները որտեղի՞ց են Արխագիա եկել:**

- Պապերս, տատերս Օրդուից, Ջընիկից են նավով եկել: Ծնողներս այստեղ են ծնվել, հայրս Գագրայից է, մայրս Ցանդրիփչի մոտակա ժղանով գյուղից:

- **Ժղանովում Եղեռնից փրկված մի տատիկ կար, անունը Ջանակ էր, նրա մասին մեր թերթում տպագրել ենք, շատ մեծ արձագանք ունեցավ, նրան ճանաչո՞ւմ էիք:**

- Այո, հիշում եմ, փոքրամարմին, բարի տատիկ էր:

- **Լավ, վերադառնա՞նք դպրոցին: Գիտեմ, որ Երևան եք եկել, որովհետև արդեն քույր դպրոց ունեք:**

- Այո, մեր ու Երևանի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 137 դպրոցը քույր դպրոցներ են: Ինձ Արխագիայի հայերի միության նախագահ պրն. Խաչիկ Մինայանն ասաց, որ Սփյուռքի նախարարության հետ այդպիսի ծրագիր կա, պետք է գամ Երևան, պայմանագիր կնքեմ այդ դպրոցի հետ: Ես էլ եկա, այցելեցի դպրոց, տնօրենը՝ տիկին Աննա Ջոհրաբյանը շատ հաճելի, աշխույժ, նախածեռնող տնօրեն է, պայմանավորվեցինք համագործակցել, համատեղ միջոցառումներ անցկացնել: «Արի տուն» ծրագրով մեր երեխաները կզան Երևան, նրանք կհյուրընկալեն, նրանց երեխաները կզան Ցանդրիփչի, մենք կհյուրընկալենք: Այնպես որ, Հայաստանի և Արխագիայի միջև թուլացած կապերը, հուսով եմ, նման ծրագրերի շնորհիվ առաջիկայում կրկին կամրապնդվեն:

Զրուցեց ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ՄԻ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Ճշտում

Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների կրոնափոխ համշենահայերի շրջանում շատերն են երգում «Լեյլիմ յար» երգի տարբերակները, ոմանք բառեր, տողեր ու քառատողեր են ավելացնում ու կրճատում: Այդ վիճակով էլ այն տեղ է գտել տարբեր երգիչների խտասկավառակներում: Լսողները կարծում են թե այն ժողովրդական երգ է, այնինչ ժողովրդական է միայն մեղեդին, իսկ տեքստը հեղինակ ունի: Ինչպես ինձ հաջողվեց պարզել, երգի բառերի հեղինակը «Վոփա» համույթի ղեկավար, ստանբուլաբնակ ճանաչված երգիչ Հիքմեթ Աբչիչեբն է, որը 1963թ. ծնվել է Քեմալփաշայի գյուղախմբում: Նա ինձ պատմեց, որ երգը գրելու շարժառիթը եղել է այն, որ ուսանողական տարիներին սիրահարվել է իր հեռավոր ազգականուհուն, բայց նա ամուսնացել է Հիքմեթի մյուս բարեկամի տղայի հետ: Բնական է, գյուղերում համարյա բոլորն իրար ազգական են: Ուրեմն այս հանրահայտ երգն ունի 25-30 տարվա պատմություն:

Ներկայացնում եմ երգի բնագիրն ու թարգմանությունը, ինչն այսուհետ կօգնի պարզել տեքստից շեղումները, հավելումներն ու կրճատումները, ցանկացողներին ունենալու երգի բնօրինակը:

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԻՔՄԵԹ ԱԲՉԻՉԵԲ

Լեյլիմ յար

Նէշանլու աղար, գէրթաս, լէյլիմ յար, աման,
Մօսփյուս փուրթ էնէլ չէս, այրըլամամ,
Աչվէնուդ արդէցուք չքօ, լէյլիմ յար, աման,
Վօ՞վ քիդա, հազ էնէլ չէս, դայանամամ:

Թուն թէվս էդի, գօդրէցար, լէյլիմ յար, աման,
Աչվիս էդի, քյօացար, այրըլամամ,
Խաբարս էդի, թօմնէցար, լէյլիմ յար, աման,
Թուն սիրդս էդի, գունգէցար, դայանամամ:

Քէզի թա հազ էնօղ գօ, լէյլիմ յար, աման,
Ան ալ յէս իմ, քիդացի՛, այրըլամամ,
Յէփ ու նէշանլու աղար, լէյլիմ յար, աման,
Ան օրէ նէստա, լացի, դայանամամ:

Լեյլիմ յար

(թարգմանություն)

Նշանվեցիր, գնում ես՛, լէյլիմ յար, աման,
Իմ կողմը չես նայում, այրըլամամ՞,
Աչքերումդ արտասուք չկա, լէյլիմ յար, աման,
Ո՞վ գիտի, չես սիրում, դայանամամ՞:

Դու ձեռքս էիր, կոտրվեցիր, լէյլիմ յար, աման,
Աչքս էիր, կուրացար, այրըլամամ,
Խոսքս էիր, վերջացար, այրըլամամ,
Դու սիրտս էիր, կանգ առար, դայանամամ:

Քեզ թե սիրող կա, լէյլիմ յար, աման,
Այն էլ ես եմ, իմացի՛ր, այրըլամամ,
Երբ որ նշանվեցիր, լէյլիմ յար, աման,
Այդ օրը նստեցի, լացեցի, դայանամամ:

1. Բնագրում՝ գէրթաս – նշանակում է և՛ «գնում ես», և՛ «գնալու ես»:
2. Թուրքերեն է, նշանակում է «չեմ կարող բաժանվել»:
3. Թուրքերեն է, նշանակում է «չեմ կարող դիմանալ»:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՉԱՄՇԵՆ» հայրենակցական-քաղաքական հասարակական կազմակերպություն: Գրասենյակ՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Գեռայնոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքրերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. “HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan). “DZAYN HAMSHENAKAN”. Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org